



# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2008  
ՕԳՈՍՏՈՍ 1(2)

**ԱՆՁԵՈՆՄԵԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

## ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**ԵՐԿՔԱԴԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

## ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն



**ՔԱԴԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ**

## ԱՐԱՅԻԿ ԹՈՒՆՅԱՆ

Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ



**ՄԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՄԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՊՀ ԱՆԴԱՄ-  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**



**ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՕԼԻՄՊԻԱ**

**ԳԵՂԱՄՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ (ՀԱՅ-ԳԵՈ)  
ԻԲԲԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐ**

**ՌՈՒԴՈԼՖ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԴԻՏԸ՝ ՈՐՊԵՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԳՈՌ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող



**ԿԱՆԱՅԸ ԲՈՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ**

**ՌՈՍԱՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ**

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ ուսումնամեթոդական բաժնի պետ



**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԲԱՐԵՓՈՆՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ և  
ԻՐԱՎԱՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Մարդկանց առանձին խմբերի իրավական վիճակի առանձնահատկությունների հիմնախնդիրը մշտապես հանդիսացել է վիճահարույց հարցադրումներից մեկը: Ընդ որում, հիշյալ հարցադրման հետ կապված տարածայնություններն էլ ավելի սուր բնույթ են ստանում, երբ խոսքը վերաբերվում է անձի անձեռնմխելիությանը և, հատկապես, քրեական պատասխանատվության ոլորտում: Այս դեպքում արդեն առավել առանցքային նշանակություն է տրվում օրենքի առջև մարդկանց իրավահավասարության սկզբունքից շեղումների հիմնավորվածության հարցադրմանը, պահանջվում են առավել ծանրակշիռ փաստարկներ, որոնք հնարավորություն կտան հիմնավորելու անձեռնմխելիության ինստիտուտի անհրաժեշտությունը:

*«Անձեռնմխելիություն» եզրույթի մեկնաբանության առնչությամբ առկա թնջուկը:* Անձի անձեռնմխելիությունը համընդհանուր ինստիտուտ է և հավասարապես տարածվում է յուրաքանչյուր անձի վրա: Այդ իրավունքի համընդհանուր բնույթն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և ան-

ձեռնմխելիության իրավունք» (մինչև 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխությունները, նույն դրույթն ամրագրված էր 18-րդ հոդվածով): Ընդ որում, հիշյալ ինստիտուտը համահունչ է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին:

Սակայն անձեռնմխելիությունը կիրառվում է նաև նեղ իմաստով, որի դեպքում հաշվի է առնվում կոնկրետ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու առանձնահատուկ կարգը: Որպես կանոն, օտարերկրյա իրավական համակարգում այդ ինստիտուտը բնորոշելիս, կիրառվում է «immunitas»<sup>1</sup> լատինական տերմինը: Իրավունքի պատմության տարբեր փուլերում այդ եզրույթն ունեցել է որոշ երանգներ, սակայն հիմնական իմաստը մնացել է անփոփոխ: Այսպես՝ հին ժամանակներում այն հիմնականում նշանակել է որոշ հարկատեսակներից ազատում, իսկ հետագայում այն տարածվել է նաև անձնական ազատության վրա:

Այսպիսով, անձի անձեռնմխելիությունը կիրառվում է լայն և նեղ իմաստներով, ինչը գործնականում երբեմն այն թյուր եզրա-

հանգամանն է հանգեցնում, որ իբրև թե այդ ինստիտուտը բոլոր դեպքերում վերաբերում է բացառապես որոշ բարձրաստիճան պաշտոնյաների: Թերևս դա է պատճառը, որ հասարակական-քաղաքական շրջանակներում ավելի հաճախ են հնչում անձեռնմխելիության ինստիտուտն ընդհանրապես վերացնելու պահանջները:

Տվյալ դեպքում մեր հետազոտության առարկան այդ եզրույթի նեղ իմաստն է: Անհրաժեշտ ենք համարում նկատել նաև, որ անձեռնմխելիության ինստիտուտը չի առնչվում միայն քրեական իրավասության հետ. այն առանձին դեպքերում արտահայտվում է քաղաքացիական կամ վարչական իրավասության, ինչպես նաև հարկման անձեռնմխելիության ձևով: Մասնավորապես, քաղաքացիական իրավասության դեպքում կարող են սահմանվել նյութական սահմանափակ պատասխանատվության եղանակներ: Վարչական իրավասության դեպքում, որպես կանոն, բացառվում է այդ կարգավիճակից օգտվող անձանց տուգանքի կամ վարչական այլ տույժի ենթարկելը: Հարկման անձեռնմխելիությունն արտահայտվում է այդ անձանց պետական, տեղական բոլոր հարկերից, տուրքերից ու պարտադիր այլ վճարումներից ազատելու ձևով (թերևս, բացառություններ են սահմանվում անուղղակի հարկերի, ժառանգական գույքի նկատմամբ իրավունքի գրանցման և այլ վճարների մասով):

Մի կարևոր հանգամանք ևս. թեև հիշյալ եզրույթը կիրառվում է երկու իմաստով, սակայն իրավաչափ չէ դրանք համադրել միմյանց այնպես, ինչպես մասն ու ամբողջը: Նեղ իմաստով անձեռնմխելիությունը բնավ

լայն իմաստով օգտագործվող նույն այդ եզրույթի մասը չէ, քանի որ իր բովանդակությամբ այն շատ ավելի «տարողունակ է» և ընդգրկում է տարրեր, որոնք որևէ կապ չունեն լայն իմաստով օգտագործվող անձեռնմխելիության հետ: Վերջինս առնչվում է ոչ միայն անձին ազատությունից զրկելու, այլև պատասխանատվության (առանձին դեպքերում՝ անգամ քաղաքացիաիրավական) ենթարկելու որոշ տարրերի հետ: Խնդիրն այն է, որ լայն իմաստով անձեռնմխելիության դեպքում առանցքային նշանակություն է տրվում այն չափանիշին, ըստ որի վերջինս անվերապահորեն տարածվում է բոլոր անձանց վրա, մինչդեռ նեղ իմաստով անձեռնմխելիությունը վերաբերում է միայն սահմանափակ թվով անձանց:

Ըստ էության, նեղ իմաստով անձեռնմխելիության ինստիտուտի անհրաժեշտությունն աստիճանաբար կորցնում է իր նախնական նշանակությունը. վերջին հաշվով, նկատվում է միտում՝ մարդու անձեռնմխելիության իրավունքի կատարելագործման միջոցով ապահովել այնպիսի իրավիճակ, երբ կբացառվի անձին ազատությունից անհիմն զրկելու և քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Ըստ էության, իրենց արդիական նշանակությունը շարունակում են պահպանել անձեռնմխելիության միայն այն տարրերը, որոնք անմիջականորեն չեն առնչվում քրեական պատասխանատվության հետ. (օրինակ, դիվանագիտական անձեռնմխելիության դեպքում ուղեբեռի զննությունը, երկրի նախագահի, դատավորների կամ պատգամավորների լիազորությունների դադարեցման հատուկ ընթացակարգերը և այլն):

*Անձեռնմխելիության ինստիտուտի ծագման նախադրյալները:*

Անձեռնմխելիության ինստիտուտի պատմահամեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրա գոյությունը հիմնականում պայմանավորված է եղել որոշ պաշտոնատար անձանց կողմից առանձին պատասխանատու գործառույթների բնականոն ընթացքն ապահովելու միտումով: Մակայն, հաշվի առնելով, որ այդ ինստիտուտը հայտնի իմաստով հակասության մեջ է օրենքի առաջ բողոքի հավասարության սկզբունքի հետ, մշտապես վիճահարույց է եղել դրա կիրառման սահմանների, իսկ որոշ դեպքերում նաև՝ իրավաչափության հարցը:

Բոլոր դեպքերում, վերը նշված տարակարծությունը հաշվի առնելով, գրեթե անվերապահորեն ընդունելի է համարվել այն տարբերակը, որի դեպքում անձեռնմխելիություն տրվում է *բացառապես կոնկրետ գործառույթների հետ կապված* և տարածվում է միայն դրանց շրջանակներում թույլ տրված արարքների վրա: Գործառույթները, որպես չափանիշ ընտրելու մոտեցումն իր ամրագրումն է ստացել նաև՝ դիվանագիտական ներկայացուցչությունների անձեռնմխելիությանը նվիրված միջազգային փաստաթղթերում: Այսպես՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին 1961 թվականի Վիեննայի կոնվենցիայի նախաբանում սահմանված է. «Դիվանագիտական անձեռնմխելիություն տրամադրվում է ոչ թե առանձին անձանց շահի համար, այլ դիվանագիտական ներկայացուցչությունների՝ որպես պետությունները ներկայացնող մարմինների, գործառույթների բարեհաջող իրականացման համար»: Ակնհայտ է, որ նշված դրույթը սկզբունքային

ու համընդհանուր նշանակություն ունի և կիրառելի է անձեռնմխելիության ինստիտուտի նկատմամբ՝ ընդհանրապես:

Անձեռնմխելիության ինստիտուտը երկարատև էվոլյուցիոն զարգացումներից հետո հիմնականում ձեռք է բերել երկու տարր՝ պատասխանատվությունից ազատում և անձի անձեռնմխելիություն<sup>2</sup>: Ըստ ռուս հայտնի իրավագետ Օ.Կուտաֆինի, պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է անգլիական պառլամենտարիզմի երկարատև և աստիճանական էվոլյուցիայի, իսկ անձեռնմխելիությունը՝ ֆրանսիական հեղափոխության արդյունք<sup>3</sup>:

*Անձեռնմխելիության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները:*

Իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ինստիտուտը հատկապես լայն կիրառում ունի պետության նախագահի, պատգամավորների, դատավորների և օմբուդսմենի առնչությամբ: Ընդ որում, հիշյալ պաշտոնյաների ցանկի կտրվածքով բացարձակապես որևէ օրինաչափություն գոյություն չունի: Մասնավորապես, պետության նախագահի համար անձեռնմխելիություն չսահմանելը բնավ չի նշանակում, թե այդպիսին չի կարող սահմանվել պառլամենտի անդամի դեպքում<sup>4</sup> և այլն:

Վերոհիշյալը վկայում է, որ անձեռնմխելիության ինստիտուտը չի կարող չափանիշ համարվել՝ տվյալ պաշտոնատար անձի պաշտպանվածության համընդհանուր մոտեցումները պարզելու համար:

Անձեռնմխելիության առանձնահատկությունները դրսևորվում են ինչպես անձանց շրջանակի, այնպես էլ՝ կիրառման սահմանների ու հիմքերի, քրեական պատասխանա-

տրվության համար համաձայնություն տվող մարմինների, իրավական հիմքերի, քրեական հետապնդում կամ արդարադատություն իրականացնող մարմինների և այլ չափանիշների տեսքով:

Ըստ վերոնշյալ հիմքերի՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել որոշ տվյալներ, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել, թե ինչ առանձնահատկություններ կան ներկայումս և ինչպիսի պատմաքաղաքական և իրավական նախադրյալներով են դրանք պայմանավորված:

*Անձեռնմխելիությամբ օժտված անձանց շրջանակը:*

Այս հիմքով առաջին խումբը կարող են կազմել այն պետությունները, որոնք անձեռնմխելիություն են սահմանել հիմնական օրենքով նախատեսված գրեթե բոլոր պաշտոնյաների համար (պետության նախագահին, պատգամավորներին, դատավորներին, օմբուդսմենին, իսկ որոշ դեպքերում՝ նաև կառավարության անդամներին): Այդ պետությունների թվին են պատկանում Գերմանիան, Բելգիան, Իսրայելը, Ռուսաստանը, Էստոնիան, Ալբանիան և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն երկրները, որոնք այդպիսի ինստիտուտ կիրառում են միայն նախագահի, պատգամավորների և դատավորների նկատմամբ: Այս տարբերակն է գործում Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Մոլդովայում, Պորտուգալիայում, Ուկրաինայում, Մադագասկարում և այլն:

Երրորդ խումբն այն պետություններն են, որոնք այդ ինստիտուտը կիրառելի են համարում բացառապես պետության նախագահի և պատգամավորների համար՝ Իտալիա,

Ճապոնիա, Ուրուգվայ և այլն:

Որպես առանձնահատկություն կարելի է դիտարկել այն, որ որոշ երկրներում անձեռնմխելիություն չի սահմանվում անգամ օմբուդսմենի համար, մինչդեռ՝ 3 երկրներում (Կանադա, Հայաստանի Հանրապետություն, Բոսնիա և Հերցեգովինա) անձեռնմխելիություն է սահմանված ոչ միայն օմբուդսմենի, այլև՝ նրա գրասենյակի պաշտոնյաների համար:

Անձեռնմխելիության առանձնահատուկ սուբյեկտ են թագավորները: Մասնավորապես, վերջիններիս վերապահված է բացարձակ անձեռնմխելիություն (ինչպես, օրինակ, Անգլիայում և Իսպանիայում), ինչը նշանակում է, որ նրանք որևէ հանցագործության համար չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության:

*Անձեռնմխելիության կիրառման սահմանները, հիմքերը և ժամկետները:*

Անձեռնմխելիության սահմանները չափազանց տարբեր են, սակայն հնարավոր է առանձնացնել առավել սկզբունքային մոտեցումներ: Մասնավորապես, համեմատական վերլուծության արդյունքները վկայում են, որ մի դեպքում հիշյալ ինստիտուտը գործում է բացառապես այն պարագայում, երբ տվյալ արարքը բխում է համապատասխան պաշտոնյայի կողմից իր քաղաքական գործունեությունից կամ պարտականությունների իրականացումից, իսկ մյուս դեպքում՝ ցանկացած հանցավոր արարքի պարագայում:

Ընդ որում, առաջին տարբերակը ևս ունի ենթատեսակներ, մասնավորապես, արտասահմանյան երկրներում լայն տարածում ունի բացառապես իր պաշտոնական գործունեության ընթացքում կարծիք հայտնելու

դեպքում անձեռնմխելիության կիրառումը, մինչդեռ՝ մեր երկրում և սակավաթիվ մյուս պետություններում այն տարածվում է նաև այլ գործողությունների վրա: Այսպես, օրինակ, Իտալիայի Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ պառլամենտի անդամը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել հայտնաձեռնված կարծիքի կամ քվեարկության համար: Շվեյցարիայի Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել պառլամենտում կամ դրա որևէ մարմնում հայտնաձեռնված կարծիքի համար: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության»: Այսինքն՝ երկրորդ դեպքում նշանակություն չի տրվում արարքի և պատգամավորի կարգավիճակից բխող գործունեության միջև կապի առկայությանը:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը ոչ բոլոր դեպքերում է ամբողջությամբ նախապատվությունը տվել երկրորդ ենթատեսակին: Այսպես՝ նույն 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնաձեռնված կարծիքի համար, եթե այն գրապարտություն կամ վիրավորանք չի պարունակում»: Այլ

կերպ ասած՝ տվյալ դեպքում գործ ունենք խառը ենթատեսակի հետ, երբ առանձին արարքների համար ընդհանրապես բացառվում է քրեական հետապնդումն, իսկ մյուսների համար՝ պահանջվում է որոշակի մարմնի համաձայնության առկայությունը:

Մեկ այլ օրինակ ևս՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Այն անձինք, ովքեր որևէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որևէ գործողության (ընդգծումը մերն է Գ.Դ.), կարծիքի կամ ընդունած որոշման համար»: Սա, ի դեպ, նախադեպը չունեցող անձեռնմխելիություն է, որը, թերևս, կարող է համեմատվել միայն վերը նշված երկրներում թագավորներին վերապահված անձեռնմխելիության հետ: Նկատի ունենանք, որ նշված դեպքում նշանակություն չի տրվում անգամ հանցագործության բնույթին:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ներկայումս մշակվել և շրջանառության մեջ է դրվել օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթ, որը ներառում է մի շարք այլ պաշտոնատար անձանց հետ մեկտեղ նաև մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պաշտոնյաներին անձեռնմխելիությունից զրկելու դրույթ: Այս առնչությամբ, մարդու իրավունքների պաշտպանն իր հրապարակային ելույթներում և օրինագծի առնչությամբ ներկայացված եզ-

րակացությամբ, անիրավաչափ է համարել իր աշխատակազմի պաշտոնյաներին անձեռնմղխելիությունից զրկելը: Ավելին, վերջինս գտել է, որ նույնպիսի անձեռնմղխելիություն պետք է սահմանվի նաև իր համար (տվյալ դեպքում նկատի ունի այն, որ իր համար սահմանված անձեռնմղխելիությունն ավելի սահմանափակ է, քան այն, ինչ սահմանված է իր աշխատակազմի պաշտոնյաների համար):

Ի դեպ, այս առնչությամբ ստացվել է նաև ԳԲԵԿՈ-ի դիրքորոշումը, համաձայն որի. «եթե իշխանությունները ցանկանում են պահպանել մարդու իրավունքների աշխատակազմի պաշտոնյաների անձեռնմղխելիությունն, ապա պետք է ներկայացնեն լրացուցիչ հիմնավորումներ»: Ակնհայտ է, որ միջազգային իրավասու կառույցները այս կերպ պատասխանելով, միանշանակ ընդգծում են անձեռնմղխելիության այդ տեսակի աննպատակահարմարության հարցը: Վերջիններիս դիրքորոշումը, կարծում ենք, միանգամայն հիմնավորված է, ինչին առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Հարկ է նկատել, որ պետության նախագահի պարագայում, որպես կանոն, նշանակություն է տրվում ոչ այնքան այն հանգամանքին, թե այս կամ այն արարքը բխում է վերջինիս կարգավիճակից, թե՛ ոչ, որքան՝ հանցագործության ծանրությանը: Այսպես՝ Իտալիայի Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահն իր պաշտոնավարության շրջանում կարող է քրեական հետապնդման ենթարկվել միայն պետական դավաճանության կամ Սահմանադրության նկատմամբ ոտնձգության համար:

Սակայն որոշ երկրներում նախագահի համար սահմանված անձեռնմղխելիության

հիմքում է դրվում նաև լիազորությունների հետ կապի հանգամանքը. օրինակ, բացարձակ անձեռնմղխելիություն է սահմանված Ռուսաստանի Դաշնության Նախագահի համար (Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 91-րդ հոդված): Ընդ որում, օտարերկրյա մի շարք իրավագետներ իրավամբ տարակուսանք են հայտնել հատկապես այն առնչությամբ, որ Ռուսաստանի Դաշնության Նախագահի բացարձակ և ցմահ անձեռնմղխելիությունը չի համապատասխանում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերին և հանդիսանում է «աննպատակ»: Ըստ Բ.Գոմենի, Դ. Խարիսի և Լ.Ջվասակի, եթե արտոնությունները չեն բխում դրանց իրավաչափ նպատակներից և հետևանքներից, չեն կարող համարվել նպատակային<sup>5</sup>:

Մի փոքր այլ մոտեցում է որդեգրվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որի 56.1. հոդվածի համաձայն՝ Նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար, մինչդեռ՝ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար նա կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո: Տվյալ դեպքում, նշանակություն է տրվում ոչ թե հանցագործության ծանրությանն, այլ՝ պաշտոնյայի կարգավիճակի հետ դրա առնչությամբ:

Սակայն այս դեպքում ևս նշանակություն է տրվել հանցագործության ծանրության աստիճանին, միայն թե՛ այլ հարաբերությունում: Այսպես՝ Հայաստանի Հան-



րապետության Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն. «Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար»: Ի դեպ, տվյալ դեպքում «ծանր հանցագործություն» եզրույթը հաջողված չէ, քանի որ այն համահունչ է սուկ նախկին քրեական օրենսգրքի դրույթներին, մինչդեռ գործող քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից (այսինքն՝ մինչև սահմանադրական բարեփոխումները), հանցագործությունների դասակարգման այլ համակարգ է ամրագրել: Մասնավորապես, ըստ բնույթի ու հանրության համար վտանգավորության աստիճանի, ծանր հանցագործություններին հաջորդում են առանձնապես ծանր հանցագործությունները: Ցավոք, քննարկվող դեպքում դեր է խաղացել այն անհաջող ավանդույթը, երբ պարզապես ընդօրինակվում է արտասահմանյան որևէ երկրի իրավական ակտի դրույթ՝ առանց հաշվի առնելու ներպետական իրավական համակարգի առանձնահատկությունները:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ կարգավիճակից բխող գործողությունների շրջանակը ամրագրված է սակավաթիվ երկրների սահմանադրություններով, սակայն, որպես կանոն, եթե այդ շրջանակը չի ամրագրված, ապա այդպիսի կապի առկայությունը որոշելու լիազորությունը յուրաքանչյուր դեպքում վերապահվում է օրենսդիր մարմնին: Այսպես, օրինակ, Բրազիլիայի Սահմանադրության 85-րդ հոդվածը սպառնչ սահմանում է այն գործողությունների շրջանակը, որոնք երկրի նախագահի կողմից կատարվելու դեպքում կհամարվեն իր կարգավիճակից բխող:

Որպես կանոն, անձեռնմխելիությունը գործում է տվյալ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնավարության ժամկետում, ինչը բխում է վերջինիս կողմից իր գործառույթները բնականոն իրականացնելու անհրաժեշտությունից: Սակայն առանձին դեպքերում, հատկապես, պետությունների նախագահների համար սահմանվում է ցմահ անձեռնմխելիություն: Այսպես՝ ցմահ անձեռնմխելիություն է սահմանված Չեխիայի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Իսրայելի և մի շարք այլ երկրների նախագահների համար (Հայաստանի Հանրապետության Նախագահի պարագայում խոսք կարող է գնալ միայն սահմանափակ անձեռնմխելիության մասին): Ընդ որում, կոնկրետ ժամկետով սահմանափակված անձեռնմխելիություն է սահմանված եղել նաև թագավորների համար. բնորոշ է, օրինակ, Ֆրանսիայի 1791 թվականի Սահմանադրության 8-րդ հոդվածը, որի համաձայն՝ թագավորին սահմանադրական եղանակով գահընկեց անելու հիմքով վերջինս զրկվում էր անձեռնմխելիությունից:

*Քրեական կամ վարչական պատասխանատվության համար համաձայնություն տվող մարմինները:*

Քրեական պատասխանատվության կամ քրեական հետապնդման որոշ տեսակներ կիրառելու համար համաձայնություն տվող մարմինների համակարգում առաջատար դեր ունի պառլամենտը: Վերջինս ոչ միայն քննարկում է պատգամավորների, այլև պետության նախագահի, օմբուդսմենի, կառավարության անդամների և այլոց առնչությամբ իրավասու մարմիններից ստացված միջնորդությունները:

Այսպես, օրինակ, Իտալիայի Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն՝ նախագահի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու առնչությամբ միջնորդությունը կարող է բավարարվել միայն պառլամենտի պալատների համատեղ նիստում պատգամավորների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Նույն Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ Նախարարների խորհրդի նախագահի կամ նախարարների նկատմամբ քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն սահմանադրական օրենքով նախատեսված կարգով սենատի կողմից տրված համաձայնությամբ:

Որոշ երկրներում պարզապես թվարկվում են այն արարքները, որոնց համար տվյալ պաշտոնատար անձը չի կարող ենթարկվել քրեական հետապնդման: Այս դեպքում կարիք չի լինում ընդհանրապես անդրադառնալ համաձայնության խնդրին, քանի որ, բացի նախատեսված արարքներից, մյուսների համար տվյալ պաշտոնատար անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում ընդհանուր հիմունքներով: Այս մոտեցումը կարելի է հանդիպել բազմաթիվ երկրներում՝ Շվեյցարիա, Գերմանիա, Լեհաստան, Ռուսիա, Սլովենիա և այլն:

*Անձեռնմխելիության իրավական հիմքերը:*

Որպես կանոն, անձեռնմխելիության ինստիտուտը սահմանված է սահմանադրությամբ, ինչը խիստ տրամաբանական է և բխում է օրենքի առջև անձանց հավասարության սկզբունքից: Խնդիրն այն է, որ միայն սահմանադրությամբ կարող են սահմանվել սահմանադրական իրավունքներից և ազատություններից շեղվելու (նկատի ունենք ինչ-

պես սահմանափակումներն, այնպես էլ՝ արտոնությունները) հիմքերը և սահմանները: Ընթացիկ օրենքները չեն կարող հակասել սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներին:

Վերոնշյալ դեպքում կարող է հարց ծագել, արդյոք ցանկացած շեղում չի՞ հանդիսանում իրավահավասարության սկզբունքի խախտում: Այս հարցին միանշանակ պատասխան տալը, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ: Խնդիրն այն է, որ հիմնական օրենքը, սահմանելով իրավահավասարության սկզբունքը, միաժամանակ, կարող է դիմել միայն այնպիսի շեղումների, որոնք տեղավորվում են իրավահավասարության սկզբունքի մեջ և չեն հակասում դրան:

Յուրաքանչյուր դեպքում չափազանց բարդ է պատասխանել այն հարցին, թե արդյոք այս կամ այն շեղումը չի հանգեցնում հիշյալ սկզբունքի խախտմանը: Ընդ որում, այդ վեճը կարող է անվերջ շարունակվել: Ուստի, խիստ տրամաբանական է, որպեսզի այդ չափանիշը սահմանվի հենց պետության հիմնական օրենքով, քանզի հենց դրանում է ամրագրված նշված սկզբունքը և հենց այդ իրավական ակտն իր ամբողջության մեջ կարող է համակարգված պատասխան տալ քննարկվող հարցին:

Բացառիկ դեպքերում արտասահմանյան երկրները սահմանադրությամբ ամրագրում են անձեռնմխելիության իրավունքը, իսկ դրանց առնչվող ընթացակարգային հարաբերությունների կարգավորումը վերապահում են, այսպես կոչված, սահմանադրական օրենքներին: Այս առումով բնորոշ է Իտալիայի Սահմանադրության վերը նշված 96-րդ հոդվածը: Այլ օրենքներով անձեռնմխելիություն սահմանելու իրավական հնարավորու-

թյուն է սահմանված նաև Շվեյցարիայի Սահմանադրության 162-րդ հոդվածով, Գերմանիայի Սահմանադրության 98-րդ հոդվածով և այլն: Այլ կերպ ասած՝ սահմանադրական օրենքներով կամ ընթացիկ օրենսդրական ակտերով անձեռնմխելիություն տրվում է միայն այն դեպքերում, երբ դա հստակ սահմանված է երկրի հիմնական օրենքով:

Միակ երկիրը, որում անձեռնմխելիության ինստիտուտը հայտնի պատճառներով ամրագրված է ոչ թե սահմանադրությամբ, այլ, այսպես կոչված, սահմանադրական ակտերով՝ Անգլիան է:

Յավոք, մեր երկրի իրավական համակարգում ձևավորվել են միջազգային իրավական չափանիշներին խորթ որոշ ավանդույթներ, որոնց համար, թերևս, իրավական մախադրյալ են ծառայել նախկին խորհրդային սահմանադրության ավանդույթները: Դրանցից մեկն էլ՝ օրենսդրական ակտերով պաշտոնյաների մի լայն զանգվածի անձեռնմխելիությամբ օժտելն է, ինչը, թեպետ թելադրված է բարի նկատառումներով, սակայն զուրկ է գիտագործնական անհրաժեշտ հիմնավորումներից և գործնականում բոլորովին այլ խնդիրներ է լուծում:

Ծայրահեղությունը հասել է նրան, որ առանձին դեպքերում ընթացիկ օրենսդրական ակտերով որոշ քաղաքացիական ծառայողների վերապահվել են անձեռնմխելիության ավելի լայն հիմքեր, քան՝ այն պաշտոնյաների համար, որոնց գործունեությանը կոչված են օժանդակելու նույն այդ ծառայողները:

*Քրեական հետապնդում կամ արդարադատություն իրականացնող մարմինները:*

Անձեռնմխելիության յուրահատուկ դրսևորում կարելի է համարել նաև այն, որ

առանձին դեպքերում սահմանվում է կոնկրետ պաշտոնյայի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու լիազորություն ունեցող մարմինը կամ արդարադատություն իրականացնող դատական ատյանը: Այսպես՝ մեր երկրի իրավական համակարգում լայն տարածում ունի որոշ պաշտոնատար անձանց<sup>6</sup> նկատմամբ քրեական գործ հարուցելու լիազորությունը բացառապես գլխավոր դատախազին վերապահելը:

Ֆրանսիայի Սահմանադրության 68-1 հոդվածի համաձայն՝ կառավարության անդամների կողմից իրենց պարտականությունները կատարելիս թույլ տված հանցագործությունների վերաբերյալ գործերի դատաքննությունը վերապահված է բացառապես Հանրապետության Արդարադատության պալատին:

Որպես առանձնահատկություն կարելի է համարել նաև այն, որ որոշ երկրներում առանձին պաշտոնյաների զանցանքների համար քրեական պատասխանատվության փոխարեն սահմանված է կարգապահական պատասխանատվություն: Ընդ որում, սահմանվում է նաև այն մարմինը, որն իրավասու է տվյալ դեպքում նշանակելու կարգապահական տույժեր: Այսպես, օրինակ, Ֆրանսիայի Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ զանցանքների համար դատավորները կրում են կարգապահական պատասխանատվություն Մագիստրատուրայի գերագույն խորհրդի առջև:

Մի կարևոր հանգամանք ևս, որպես կանոն, կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահվում է տվյալ պաշտոնատար անձի վերադաս մարմնին: Սակայն հարկ է նկատել, որ այդ ընդհանուր կանոնը կիրառելի չէ դա-

տավորների նկատմամբ: Ընդ որում, խոսքը վերաբերում է բացառապես կարգապահական պատասխանատվության ենթարկելուն և ոչ թե՛ կարգապահական վարույթ հարուցելուն: Միջազգային փորձը վկայում է, որ այդ դեպքում առավել ընդունելի է համարվում դատավորների ինքնակառավարման մարմիններին հիշյալ բնույթի լիազորություններով օժտելը: Ընդ որում, որոշ դեպքերում ինքնակառավարման մարմինները եզրակացություն են ներկայացնում օրենսդիր մարմնին կամ երկրի նախագահին՝ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու հիմնավորվածության վերաբերյալ: Ի դեպ, մեր երկրում ևս այդ սկզբունքն է ամրագրված. հիշյալ լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդին:

*Անձեռնմխելիության սահմանները (ներպետական և միջազգային քրեական դատավարության շրջանակներ):*

Ներկայումս լուրջ խնդիր է միջազգային քրեական դատավարության շրջանակների հարցը: Վերջին շրջանում կնքվում են միջազգային փաստաթղթեր, որոնք ակնհայտ անտեսում են անձեռնմխելիության ինստիտուտը, այսինքն՝ դրանցում նախատեսված պաշտոնատար անձանց միջազգային դատական ատյաններին հանձնելը բացարձակապես կախվածության մեջ չի դրվում այդ ինստիտուտի հետ: Տվյալ դեպքում հարց է ծագում՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրված անձեռնմխելիության ինստիտուտը կիրառելի է նաև միջազգային՞ դատական ատյանների պարագայում, թե այն վերաբերում է միայն ներպետական ատյանների կողմից կիրառվող սահմանափակումներին:

Այս հարցի առնչությամբ մեր երկրի սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ի թիվ ՄԴՈ-502 որոշմամբ ամրագրվել է այն դիրքորոշումը, որ անձեռնմխելիության ինստիտուտը կիրառելի է նաև միջազգային դատական ատյանների հետ փոխհարաբերություններում: Մասնավորապես, անդրադառնալով 1998 թվականի հուլիսի 17-ի Հռոմում ստորագրված՝ միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցին, սահմանադրական դատարանը կայացրել է հետևյալ որոշումը. «1. 1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունն, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է Հայաստանի Հանրապետության ներպետական քրեական իրավագործության մարմինները (կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ եւ 92-րդ հոդվածներին: 2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի,

81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Ըստ էության, սահմանադրական բարեփոխումների արդյունքում կատարված փոփոխությունները գրեթե անփոփոխ են թողել վերոնշյալ դրույթներն, ինչը վկայում է այն մասին, որ սահմանադրական դատարանի դիրքորոշումը պետք է ուղենիշ համարվի նաև ներկայումս:

Բնավ, կասկածի տակ չդնելով սահմանադրական դատարանի դիրքորոշումն, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հարցը չափազանց բարդ է և դեռ լրացուցիչ քննարկումների տեղիք է տալու: Մասնավորապես, տարակուսանքի հիմքում ընկած է հետևյալ մտեցումն. անձեռնմխելիության ինստիտուտը կոչված է ապահովելու կոնկրետ պաշտոնատար անձանց անխափան գործունեության երաշխավորվածությունն, ինչն իր հերթին պայմանավորված է ներպետական քաղաքական ներքին կյանքի հնարավոր խոցելի դրսևորումներով: Սակայն այլ է իրավիճակը միջազգային դատական ատյանների պարագայում և կարելի է ենթադրել, որ վերջիններս չեն կարող առնչվել ներքին քաղաքական նպատակով հետապնդումների հետ: Միաժա-

մանակ, չի էլ կարելի բացառել, որ միջազգային դատական ատյանները ևս գործեն անաչառության սահմաններից դուրս և փորձեն իրականացնել զուտ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված հետապնդումներ: Ինչևէ, կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում նպատակահարմար է հստակ սահմանել անձեռնմխելիության սահմանները, և բացառել անհարկի տարամեկնաբանությունը: Մյուս կողմից, կարծում ենք, միջազգային փաստաթղթերում ևս իրավաչափ չէ անձեռնմխելիության ինստիտուտի անվերապահ անտեսումը:

Ամփոփելով անձեռնմխելիության ինստիտուտին առնչվող որոշ հարցադրումների հետազոտության արդյունքները՝ նպատակահարմար ենք համարում նկատել, որ մի հոդվածում բնավ հնարավոր չէ առանձնացնել բոլոր հարցադրումները և սպառնիչ պատասխան տալ դրանց: Երախտապարտ կլինենք, եթե այս հիրավի հրատապ հիմնախնդրի առնչությամբ սույն հոդվածում ներկայացված դատողությունները համարժեք արձագանք ունենան քաղաքագետների ու իրավագետների շրջանում:

<sup>1</sup> «Immunitas» լատինական բառը թարգմանվում է. «պատժից, պարտավորություններից ազատել»:

<sup>2</sup> Տվյալ դեպքում «անձեռնմխելիություն» եզրույթը կիրառվում է էլ ավելի նեղ իմաստով, որի տակ հաշվի են առնում բոլոր այն անձնական արտոնությունները, որոնք անմիջականորեն չեն առնչվում քրեական կամ վարչական պատասխանատվությունից ազատելու կամ այդպիսի պատասխանատվություն կիրառելու առանձնահատուկ միջազգային սահմանելու հետ:

<sup>3</sup> Տե՛ս Кутафин О.Е. Неприкосновенность в конституционном праве Российской Федерации. М., 2004г., էջ 16:

<sup>4</sup> Այսպես՝ Ֆրանսիայի Սահմանադրության 26-րդ հոդվածով քրեական պատասխանատվության անձեռնմխելիություն է սահմանված միայն պատգամավորների համար: Արտասահմանյան երկրների սահմանադրություններից բոլոր մեջբերումների հիմքում դրված է հետևյալ ժողովածուն. Конституции зарубежных стран. Сост. Дубровин В.Н. М., ООО «Издательство Юрлитинформ» 2003г.:

<sup>5</sup> Տե՛ս Гомен Д., Харис Д., Зваак Л., Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М., 1998г., էջ 453, 457:

<sup>6</sup> Այդպիսիք են դատախազները («Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդված), նոտարները («Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդված) և հատուկ քննչական ծառայության ծառայողները («Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդված):



## ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն

## ԵՐԿՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Երկքաղաքացիության ընդունման գործընթացում հաճախ խոչընդոտներ են առաջանում, երբ քաղաքացիությունը ձեռք է բերվում կոնկրետ պետության հետ երկքաղաքացիության մասին համապատասխան միջազգային պայմանագրի կամ քաղաքացիություն շնորհվող երկրի համապատասխան ներպետական օրենքի բացակայության պարագայում: Դրա հետ մեկտեղ, երկքաղաքացիության իրավունքը ճանաչած տարբեր երկրներում այս ոլորտի վերաբերյալ առկա օրենսդրությունում խոցելի կողմեր են նկատվում, որոնք այդ ոլորտին առնչվող միջազգայնորեն ճանաչված գործող նորմերի անտեսման արդյունք են: Նման իրավիճակը շտկելու նպատակով, քաղաքացիության հիմնախնդիրների լուծման գործում անհրաժեշտ է հաշվի առնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար սկզբունքների ամրագրումն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքում:

Այդ գաղափարն իր տեսական հիմնավորումն է ստացել իրավաբան գիտնականների աշխատություններում: Այսպես՝ Վ. Գրաֆսկին միջազգային իրավունքում այդ խնդրի լուծման համար առանձնացնում է չորս հիմնական ուղղություններ: Առաջինը՝

մարդու իրավունքների պաշտպանությունն է, երկրորդը՝ ջանքերի միավորումը խաղաղության, կարգ ու կանոնի և սոցիալական կայուն զարգացման համար, երրորդը՝ արդարության դերը՝ որպես հասարակության հիմքերից մեկը, և չորրորդը՝ պետությունների տարածքային համագործակցությունը, որը որոշակի պարտավորություններ է դնում պայմանավորվող կողմերի վրա<sup>1</sup>: Խնդրի լուծման հարցը Մ. Բազլայր քննարկում է այն համատեքստում, երբ, օրինակ, կինն ամուսնանում է արտասահմանցու հետ, իսկ վերջինիս պետության օրենքով նա պարտավոր է ընդունել ամուսնու երկրի քաղաքացիությունը: Այդպիսի իրավիճակում կարող է հայտնվել նաև երեխան, որի ծնողներն ունեն տարբեր քաղաքացիություն<sup>2</sup>: Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ երկքաղաքացիները կարող են ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ այն պետությունների օրենսդրության համապատասխան, որոնց քաղաքացիներն են իրենք<sup>3</sup>:

Վերոնշյալ դրույթները գործնական կիրառություն են գտել քաղաքացիության վերաբերյալ վերջին տարիներին ընդունված միջազգային փաստաթղթերում, առավել ևս, որ միջազգային մակարդակով ակտիվացել է

երկքաղաքացիության ոլորտում նորմատիվային բազայի մշակումը և պետությունների միջև տարածաշրջանային բնույթի երկկողմ պայմանագրերի կնքումը: Ավելին, քաղաքացիության մասին 1997 թվականի եվրոպական համաձայնագիրը հնարավորություն է տալիս ավելի հստակ կարգավորելու երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավական կարգավիճակի հարցերը:

Փորձը ցույց է տալիս, որ անձն օրենքով պաշտպանված է սեփական պետության սահմաններում: Սակայն այլ պետությունների տարածքում նա հայտնվում է միանգամայն անպաշտպան վիճակում, քանի որ այդ պետություններն իրավականորեն պարտավորված չեն պաշտպանել իրենց քաղաքացիությունը չունեցող անձանց: Մինչդեռ՝ երկքաղաքացիությունն անձի համար իրավունքներ և պարտականություններ է ապահովում ոչ միայն իր պետության տարածքում, այլև՝ նրա սահմաններից դուրս:

Ըստ ապաքաղաքացի կարգավիճակի մասին 1954 թվականի Համաձայնագրի, քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր անձ պարտականություններ ունի այն երկրի նկատմամբ, որում նա գտնվում է, քանի որ նա պարտավոր է ենթարկվել նրա օրենսդրությանն, ինչպես նաև հասարակական կարգի պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին (հոդված 2):

Դրա հետ մեկտեղ, մշտական կամ ժամանակավորապես բնակության երկրի քաղաքացիություն չունեցող կամ երկքաղաքացի անձինք հաճախ հայտնվում են անպաշտպան վիճակում: Նման դեպքերում առաջնահերթ խնդիր է դառնում արտասահմանում ապրող երկքաղաքացիների դիվանագիտա-

կան և հյուպատոսական պաշտպանության հիմնահարցը, որն, ըստ էության, միջազգային իրավունքի կարևոր ինստիտուտներից մեկն է:

Միջազգային իրավունքի նորմերով նախատեսված կարգով՝ պետություններին վերապահվում է արտասահմանում գտնվող սեփական քաղաքացու վերաբերյալ դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանություն իրականացնելու հնարավորություն: Միաժամանակ, այն պետությունները, որոնցում ժամանակավորապես բնակվում է մեկ այլ պետության քաղաքացի, պարտավոր են հարգելու վերը նշված իրավունքը:

Դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանության իմաստն այն է, որ եթե այդ ընթացքում պարզվում է, որ դիվանագիտական պաշտպանություն իրականացնող պետության քաղաքացու նկատմամբ խախտվել են քաղաքացու գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ նրան վերապահված իրավունքներն, ապա պաշտպանող պետությունն իրավասու է պահանջելու վերականգնել սեփական քաղաքացիների խախտված իրավունքները և, անհրաժեշտության դեպքում, պատժել մեղավորներին, ինչպես նաև՝ փոխհատուցել քաղաքացուն պատճառված վնասները:

Միջազգային փաստաթղթերում ամրագրված է. «Անձը, որին քաղաքացիության պետության կողմից պաշտպանություն է ցույց տրվում, եթե իրականում խախտել է բնակության վայրի օրենսդրությունն, ապա այդ դեպքում պետությունը «չի հրաժարվում» իր քաղաքացուց, այլ օգնում է նրան՝ պաշտպան վարձելու, խորհրդատվական օգնություն կազմակերպելու»: Այդ դեպքում,

պետության կողմից ցույց տրված օգնությունը կարելի է որակել ոչ թե դիվանագիտական պաշտպանություն, այլ «հովանավորչություն»<sup>4</sup>:

Միջազգայնորեն ճանաչված նորմերով ֆիզիկական անձի նկատմամբ դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտպանություն իրականացնելու համար անհրաժեշտ է երկու նախապայման.

1. այն անձը, որը տվյալ պետության քաղաքացի է, և իր քաղաքացիության պետությունը պատրաստակամություն է հայտնում համապատասխան պաշտպանություն ցույց տալ նրան:

2. Քաղաքացուն առանձին անձանց կամ պետական հաստատությունների կողմից վնաս պատճառելու իրական սպառնալիքը:

Ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք գտնվում են իրենց հայրենիքից դուրս, դիվանագիտական պաշտպանություն կարող է իրականացվել նաև երրորդ պետության կողմից: Սակայն ըստ Վիեննայի՝ 1961 թվականի ապրիլի 18-ի Դիվանագիտական հարաբերությունների մասին համաձայնագրի 46-րդ հոդվածի՝<sup>5</sup> այդպիսի պաշտպանությունը կարող է կրել ժամանակավոր բնույթ, իսկ այն ցույց տալու համար անհրաժեշտ է համապատասխան միջազգային պայմանագրի առկայությունը: Այդ պայմանագիրը պետք է կնքված լինի ֆիզիկական անձի ներկա գտնվելու պետության և այն երկրի միջև, որի քաղաքացիությունը նա կրում է: Այդպիսի դիվանագիտական պաշտպանությունը կարող է իրականացվել միմիայն տվյալ պետության հետ նախնական համաձայնություն ձեռք բերելուց հետո: Նման մոտեցումն ամրագրված է նաև 1963 թվականի ապրիլի 24-ի Հյուպա-

տոսական հարաբերությունների մասին Վիեննայի համաձայնագրի 8-րդ հոդվածում<sup>6</sup>: Նշված հիմնախնդիրների վերաբերյալ համապատասխան դրույթներ են ամրագրված Եվրամիության մասին համաձայնագրում,<sup>7</sup> Եվրոպական միության քաղաքացիների ընկերակցության մասին հռոմեական պայմանագրում (հոդված 20)\*:

Երկքաղաքացիություն ունեցող անձանց դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտպանության խնդրում, միջպետական հարաբերությունների ոլորտում երբեմն կարող են առաջանալ որոշակի դժվարություններ: Պատճառներից մեկն այն է, որ սեփական քաղաքացու՝ դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտպանությունն ընդդեմ այն պետության, որի քաղաքացի է նաև այդ անձը, կարող է պակաս արդյունավետ լինել: Նման պարագայում ստեղծվում է մի իրավիճակ, երբ պետություններից մեկը, որի տարածքում խախտվել է երկքաղաքացիություն ունեցող անձի իրավունքները, կարող է մերժել քաղաքացիության մյուս պետության կողմից այդ անձի պաշտպանության առաջարկը:

Փաստորեն, ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որի դեպքում մի պետությունն իրավասու է պաշտպանություն հանդես բերել իր քաղաքացու նկատմամբ այս կամ այն ձևով (անմիջականորեն պահանջ ներկայացնելով ուրիշ պետությանը, դիմելով որևէ միջազգային կազմակերպության և այլն), իսկ մյուս պետությունը, որի քաղաքացիությունն այդ անձը նույնպես ունի, իրավունք ունի այն մերժելու: Դրա հետ մեկտեղ, նա կարող է համաձայնվել կարգավորելու վեճը «միջազգային իրավունքի կողմից թույլատրելի միջոցներով»:



րի օգնությամբ»<sup>9</sup>:

Հարցը կարող է ավելի բարդանալ, երբ երկքաղաքացու իրավունքները խախտվում են երրորդ պետության տարածքում: Այդ դեպքում ո՞ր պետությանը կարելի է նախապատվություն տալ, և դրան համապատասխան, իրավական ինչպիսի՞ դիրքորոշում կընդունի երրորդ պետությունն իր տարածքում գտնվող երկքաղաքացիություն ունեցող անձի նկատմամբ՝ դիվանագիտական պաշտպանության առումով:

Ֆիզիկական անձին դիվանագիտական կամ հյուպատոսական օգնություն տրամադրելու դեպքում, ավելորդ բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է կանոնակարգված մոտեցում: Այդպիսի մոտեցումը կարող է կառուցվել՝ հաշվի առնելով երկու սկզբունք. ա) քաղաքացիության հավասարության, բ) քաղաքացիության արդյունավետություն: Յուրաքանչյուր սկզբունք գործնականում տարբեր մոտեցումներ է պահանջում: Կիրառության առումով համեմատաբար պարզ է քաղաքացիության հավասարության սկզբունքը: Համաձայն այդ սկզբունքի՝ երկու պետության քաղաքացիություններն էլ ունեն հավասար նշանակություն: Այստեղից հետևում է, որ նման պարագայում շահագրգիռ պետություններից որևէ մեկը չի կարող հավակնել պաշտպանելու սեփական քաղաքացու հայցը մյուս պետության նկատմամբ, որի քաղաքացիությունը տվյալ անձը նույնպես ունի:

Տարբեր երկրների՝ եվրոպական կառույցներում ինտեգրվելու գործընթացը, կնպաստի առաջիկայում անձի դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանության հիմնահարցի կարգավորման վերաբեր-

յալ ավելի արդյունավետ որոշումների ընդունմանը: Բնականաբար, Հայաստանի Հանրապետության համար առավել կարևոր է մեր հայրենակիցների դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանությունը, որոնք գտնվում են երրորդ պետության տարածքում: Այդ որոշումները մեծ չափով կնպաստեն նաև նրանց՝ նշված կարգավիճակից բխող հարցերի կանոնակարգմանը:

Երկքաղաքացիությունը ստեղծում է նաև մի շարք խնդիրներ՝ կապված պետության անվտանգության հետ: Այդ առնչությամբ երկքաղաքացիների զինապարտության հետ կապված բազմաթիվ հարցեր են առաջանում: Ավելին, միջազգային ռազմական բախումների ժամանակ երկքաղաքացիների իրավական վիճակը դառնում է ավելի քան անորոշ, քանի որ միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը չեն բովանդակում պատերազմի ժամանակ երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավական կարգավիճակը սահմանող բավարար նորմեր, և նրանցում անհրաժեշտ է համապատասխան համալրում կատարել:

Վերջին տարիներին Եվրոպայի երկրներում տարածված է այն կարծիքը, որ երկքաղաքացիության ինստիտուտը չի ենթադրում երկակի օրինապահություն, այլ հանդիսանում է «ոչ բնիկ» ժողովրդի՝ իր իրավական կարգավիճակի նկատմամբ վստահության բարձրացման արդյունավետ միջոց և ստանում է առավել վստահելի վերաբերմունք իրենց ապրած երկրի նկատմամբ՝ դրանով իսկ նպաստելով հասարակությունում և երկրում կայունության ամրապնդմանը<sup>10</sup>: Այդ գաղափարի անմիջական շարունակությունը և հաստատումն է այն, որ երկքաղաքացիներ-

րը, և առհասարակ երկքաղաքացիությունը, կարող է նպաստել պետությունների միջև լարվածության թուլացմանը և փոխըմբռնման հաստատմանը: Կարելի է առանց վարանելու հաստատել գրականության մեջ այդ կապակցությամբ հայտնված կարծիքը, որ մի շարք դեպքերում երկքաղաքացիություն ունեցող անձինք «կարող են անգամ նպաստել իրենց քաղաքացիության պետությունների միջև պատերազմի կանխմանը»<sup>11</sup>:

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով ռազմական հնարավոր բախումների և արդեն իրականացվող շրջափակման պայմաններում, չի կարող իր քաղաքացիների կողմից հայրենիքի պաշտպանության պարտականությունների կատարմանը մոտենալ այլընտրանքային տարբերակով: Նման պարագայում պահանջվում է օրենսդրորեն կարգավորել երկքաղաքացիների զինապարտության խնդիրը: Պետք է ենթադրել, որ հենց վերոնշյալն է հաշվի առել Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը. «Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի»: Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունից միակողմանի հրաժարված ՀՀ քաղաքացիների վրա (հոդված 131):

Եվրոպայի Խորհրդի 1963 թվականի համաձայնագրով՝ բազմաքաղաքացիության դեպքում անձն իր զինվորական պարտակա-

նությունը պետք է կատարի իր բնակության երկրի տարածքում: Եթե անձը բնակվում է այն երկրի տարածքում, որը չի հանդիսանում նրա սկզբնական քաղաքացիական պատկանելիության երկիրն, ապա նա կարող է զինվորական ծառայություն անցնել քաղաքացիության պարտականության երկրներից որևէ մեկի տարածքում (հոդված 6):

Հատկանշական է այն, որ զինապարտության հիմնահարցը սպառնիչ կարգավորված չէ անգամ ժողովրդավարական կարգ ունեցող երկրներում: Սակայն այդ հարցում նկատվում է դրական միտում՝ պետությունների մի մասը հիմնահարցը կարգավորում է երկկողմ միջպետական համաձայնագրերի միջոցով: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ը 1930-ականներին երկքաղաքացի զինապարտների կարգավիճակի վերաբերյալ պայմանագրեր կնքեց սկանդինավյան երկրների հետ: Դրա օրինակով 1950-ականներին համանման համաձայնագրեր կնքվեցին եվրոպական մի շարք երկրների՝ Շվեյցարիայի և Ֆրանսիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի միջև: Ինչպես ԱՄՆ-ի և սկանդինավյան երկրների, այնպես էլ նշված եվրոպական երկրների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ երկքաղաքացիները պարտավոր են անցնել զինվորական ծառայություն այն պետությունում, որի տարածքում ավելի շատ են բնակվել և որի հետ սերտ կապեր ունեն: Համանման սկզբունքներ է բովանդակում Ֆրանսիայի և Իսրայելի միջև զինապարտության մասին 1959 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագիրը<sup>12</sup>:

Երկքաղաքացիների զինվորական ծառայության կարգավորման միջազգային պայմանագրային պրակտիկայից բխում է մի

շարք հիմնարար սկզբունքներ, որոնք, մեր կարծիքով, կարելի է հաշվի առնել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մշակելիս.

ա) երկքաղաքացիները զինծառայությունը պարտավոր են անցնել մշտական բնակության պետությունում, իսկ երկու քաղաքացիության պետությունների փոխհամաձայնության դեպքում՝ զինապարտին զինվորական ծառայություն կատարելու հնարավորություն կարող է տրվել երկրներից որևէ մեկում,

բ) անձինք, ովքեր մինչև քաղաքացիության հարցերով երկու պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելն անցել են զինծառայություն, քաղաքացիության պետություններից մեկի տարածքը համարվում է նաև մյուս պետության նկատմամբ զինապարտությունը կատարած,

գ) մշտական բնակության վայրում զինվորական ծառայություն կրած երկքաղաքացին իր երկրորդ քաղաքացիության երկրում մշտական բնակության տեղափոխվելուց հետո, ենթակա է զորակոչի վերջին պետությունում՝ միայն որպես պահեստային զինծառայող:

Կարգավորված չէ պատերազմող պետությունների երկքաղաքացիների զինվորական պարտականությունների կատարման հարցը: Այս հարցի առնչությամբ կարելի է վկայակոչել 1949 թվականի Ժնևի համաձայնագիրը և դրան կից լրացուցիչ արձանագրությունները: Նրանցում նախատեսվում է, որ երկքաղաքացին պետք է զորակոչվի ծառայելու այն պետության զինված ուժերում, որտեղ մշտապես բնակվում է:

Երկքաղաքացիների կողմից զինվո-

րական պարտականությունների կատարման հարցը երկքաղաքացիության մյուս բացասական հետևանքների հետ միասին դարձել է միջպետական բանավեճերի առարկա: Այդ իրողությունը դիպուկ է բնութագրել Վ. Չերնիչենկոն. «Կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ անձը, որ ունի երկու կամ բազմաթիվ քաղաքացիություն, ենթակա լինի զինվորական ծառայության զորակոչման իր քաղաքացիության երկրում: Սակայն երկրորդ երկիրը, որի քաղաքացին է նաև այդ անձն, իրավունք ունի նրան կանչել պատասխանատվության այլ երկրում զինվորական ծառայության իրականացման համար»<sup>13</sup>:

Երկքաղաքացիների կողմից զինվորական պարտականությունների կատարման պատճառով միջպետական առաջին վեճը տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբին: Անձը, որն ուներ Ֆրանսիայի քաղաքացիություն, Անգլիայում ենթարկվել է պատասխանատվության դավաճանության համար, քանի որ նրա հայրը ծնվել էր Անգլիայում, և այդ անձը գերի էր վերցվել՝ Անգլիայի դեմ արտասահմանյան զորքերի կազմում պատերազմելիս:

Երկքաղաքացիության դեպքում երկակի զինվորական պարտականության հիմնահարցը միջազգային պրակտիկայում լուծվում է երկու տրամաբանորեն հակադիր մոտեցումներով.

1. փորձեր է կատարվում համապատասխան միջազգային համաձայնագրերով կանխել, արգելել, վերացնել երկքաղաքացիությունը: Այդպիսի համաձայնությունների արդյունքում կարող է վերացվել հիմնախնդիրը՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց բացակայության պատճառով:

2. Երկքաղաքացիության թույլտվության դեպքում կոնկրետ լուծել հարցը, թե ո՞ր երկրում պետք է անցնի զինվորական ծառայության:

Առաջին մոտեցումը բովանդակում է պարզ դրույթ և առանձին մեկնաբանության կարիք չունի: Երկրորդի դեպքում կարելի է առանձնացնել ինչպես միջազգային պայմանագրերը, որոնք կարգավորում են երկքաղաքացիության հարցերն ամբողջությամբ վերցրած, այնպես էլ առանձին միջպետական համաձայնագրերը, որոնք ուղղված են բազմաքաղաքացիության դեպքում բացառապես երկակի զինապարտության հարցի լուծմանը:

Երկքաղաքացիության դեպքում զինապարտության վերաբերյալ երկկողմ միջազգային համաձայնագրերի օրինակ են ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների՝ Նորվեգիայի (1930 թ.), Շվեդիայի (1933 թ.), Շվեյցարիայի (1937թ.) և Ֆինլանդիայի (1939 թ.) միջև կնքված պայմանագրերը: Համանման պայմանագրեր են կնքել առանձին Եվրոպական պետություններ: Այսպես՝ երկքաղաքացիների կողմից զինվորական ծառայության վերաբերյալ համաձայնագրեր են կնքվել Շվեյցարիայի և Ֆրանսիայի (1958թ.), Ֆրանսիայի և Իսրայելի (1959 թ.), Ֆրանսիայի և Իսպանիայի (1970 թ.) միջև և այլն:

ԱՄՆ-ի կողմից 1930-ական թվականներին վերը նշված երկրների հետ կնքված պայմանագրերը բովանդակում են դրույթներ այն մասին, որ երկքաղաքացիություն ունեցող անձինք պարտավոր են անցնել զինվորական ծառայություն այն պետությունում, որի տարածքում նրանք ունեն հիմնական բնակություն և որոնց հետ առավել սերտորեն կապված են: Եթե համաձայնագիր

ստորագրած պետություններից որևէ մեկում այդ անձինք զինվորական ծառայություն են կատարում, ապա համարվում է, որ նրանք այն իրականացրել են նաև մյուս պետությունում<sup>14</sup>:

Ֆրանսիայի և Իսրայելի միջև 1959 թվականի հունիսի 30-ին կնքված՝ զինապարտության մասին պայմանագրում նախատեսվում է, որ երկքաղաքացիները պետք է զինվորական ծառայություն իրականացնեն մշտական բնակության պետությունում: Երրորդ պետությունում մշտական բնակության դեպքում այդ անձինք, համաձայն կնքված պայմանագրերի, իրավունք ունեն ընտրելու, թե պետություններից որում նրանք պետք է անցնեն պարտադիր զինվորական ծառայությունը<sup>15</sup>:

Այլ սկզբունքներ են առկա Եվրոպական որոշ պետությունների միջև զինապարտության մասին կնքված համաձայնագրերում: Նրանց հիմքում ընկած են պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների առկայությունը, որը մեղմացնում է զինվորական ծառայության հետ առնչվող հիմնահարցերը: Այսպես՝ Ֆրանսիայի և Իսպանիայի միջև 1970 թվականին կնքված զինապարտության վերաբերյալ երկկողմ պայմանագիրը նախատեսում է, որ երկքաղաքացին պարտավոր է անցնել պարտադիր զինվորական ծառայություն այն պետությունում, որտեղ նա առավել երկար ապրել է վերջին 12 ամսում՝ մինչև 18 տարեկան դառնալը<sup>16</sup>:

Ամփոփելով՝ ասենք, որ զինապարտության հարցի կարգավորման հիմքում ընկած են միջազգային համաձայնագրերը, որոնք պետությունների միջև երկկողմ համաձայնագրերի կնքման հիմք են ծառայում: Այդ համաձայնագրերից կարելի է առանձնացնել

1997 թվականի քաղաքացիության մասին եվրոպական համաձայնագիրը, որի համաձայն՝ «անձինք, որոնք հանդիսանում են մասնակից պետության քաղաքացի, որտեղ պարտադիր զինվորական ծառայություն չի նախատեսվում, համարվում են զինվորական ծառայությունն անցած, եթե նրանք մշտապես բնակվում են այդ մասնակից պետության տարածքում»<sup>17</sup>:

Ինչպես երկքաղաքացիություն ընդունող ամեն երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ նշանակություն ունի երկքաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու հիմնախնդրի լուծումը: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ժամկետային ծառայություն անցնելը պարտադիր է: Բարդություններ կարող են առաջանալ՝ զինապարտության օրենքը երկքաղաքացիների վրա տարածելիս: Նման պարագայում առաջանում են փոխկապակցված երկու խնդիրներ. ա) երկու երկրի քաղաքացիություն ունեցող հայն իրավունք կունենա ընտրել, թե դրանցից ո՞ր մեկի բանակում է ծառայելու, բ) այլ երկրները կհամաձայնե՞ն, որ հայազգի քաղաքացիները ծառայեն ոչ թե իրենց, այլ մի օտար երկրի բանակում:

Նմանատիպ հարցերի պատասխանը բովանդակում է քաղաքացիության մասին եվրոպական համաձայնագրի (Ստրասբուրգ, 1997 թվականի նոյեմբերի 6) 7-րդ գլխում: Նրանում հստակորեն նշված է, որ երկքաղաքացի անձը զինապարտության իր պարտականությունը պետք է կրի միայն մեկ երկրում՝ կամ այն երկրում, որում բնակվում է, կամ իր

ցանկությամբ այն երկրում, որում չի բնակվում, սակայն որի քաղաքացին է հանդիսանում: Փաստորեն, պետությունների համաձայնությամբ երկքաղաքացին կարող է գորակոչվել այն երկրում, որտեղ նա մինչ գորակոչի տարիքը մշտապես բնակվում է, կամ այն երկրում, որի քաղաքացին նա նույնպես հանդիսանում է, սակայն այնտեղ չի բնակվում: Որոշ դեպքերում նման երկքաղաքացի-գորակոչիկին ընտրության հնարավորություն է տրվում:

Պատերազմական գործողությունների մեջ գտնվող պետությունների երկքաղաքացիներին երկու պետությունների հանդեպ թշնամի չդարձնելու նպատակահարմարությունից ելնելով՝ պետք է գորակոչել այն պետության զինված ուժերի շարքում, որտեղ մշտապես բնակվում է: Պետք է նշել, որ և՛ տեսականորեն, և՛ միջազգային պրակտիկայում այս հարցի վերաբերյալ վերջնական մոտեցումներ չկան:

Երկքաղաքացիների զինապարտության հիմնախնդիրն առանձնապես հրատապ է ո՛չ պատերազմի և ո՛չ խաղաղության իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության համար: Կարևորվում է, մասնավորապես, երկքաղաքացի սփյուռքահայության՝ մայր հայրենիքում զինապարտության անցկացումը: Այդ հանգամանքը պետք է հավուր պատշաճի, ընկալելի և ընդունելի դիվանագիտական լեզվով ներկայացնել տարածաշրջանում շահագրգիռ բոլոր երկրներին:

Երկքաղաքացիության հիմնահարցի նկատմամբ պետությունները տարատեսակ մոտեցում են դրսևորում նաև խաղաղ ժամանակաշրջանում: Առանձին պետություններ փորձում են այն ծառայեցնել սեփական պե-

տության քաղաքացիության հիմքերի ամրապնդմանը: Այսպես՝ որոշ պետություններ երկքաղաքացիությունն օգտագործում են արտասահման մեկնած սեփական քաղաքացիների հետ կապերի պահպանման համար, որպեսզի իրենց ազդեցությունն ուժեղացնեն տարբեր երկրներում:

Կան նաև այլ մոտեցումներ: Այսպես՝ Շվեյցարիան, Հունաստանը, Խորվաթիան և Սլովենիան թույլատրում են երկքաղաքացիություն, ուստի և երկակի օրինապահություն միայն իրենց այն քաղաքացիների նկատմամբ, որոնք մշտապես ապրում են արտասահմանում: Մինչդեռ իրենց երկրում մշտապես բնակվող քաղաքացիներին արգելում են ունենալ երկքաղաքացիություն: Այսինքն՝ դրանով իսկ վերը նշված երկրները դրսևորում են երկակի մոտեցում, իրենց երկրում չճանաչելով երկքաղաքացիությունը, մինչդեռ այլ երկրում բնակվող ազգակիցներին չեն զրկում սեփական քաղաքացիությունից<sup>18</sup>:

Փաստորեն, պետությունները տարատեսակ մոտեցում են դրսևորում օրինապահության հիմնահարցի նկատմամբ: Ամեն մի պետություն, որը լուծում է սեփական քաղաքացիներին երկքաղաքացիության թույլտվության, սահմանափակման կամ արգելման հարցն, անխուսափելիորեն պետք է որոշի, թե երկքաղաքացիության ո՞ր տարբերակներն են համապատասխանում իր պետական շահերին: Նման պարագայում է միայն հնարավոր երկքաղաքացիության ինստիտուտի ամրապնդումը:

Երկքաղաքացիությունը, կամա թե ակամա, բազմապիսի խնդիրներ է առաջադրում անձի իրավունքների պաշտպանության ոլորտում: Նման խնդիրների արդարա-

ցի լուծման ժողովրդավարական ձևը դատական պաշտպանությունն է: Այն իրականացվում է միջազգային դատական մարմինների կողմից՝ երկքաղաքացիների հայցի քննության միջոցով:

Երկքաղաքացին օգտվում է այն իրավունքներից, որոնք նրան ընձեռում են պետությունները, որոնց քաղաքացին է նա հանդիսանում: Ուստի, նա պարտավորվում է միաժամանակ իրականացնել իր պարտականությունները պետությունների հանդեպ, որոնք նրան քաղաքացիության իրավունք են տվել: Այսինքն՝ երկքաղաքացին ունի ինչպես երկակի իրավունք, այնպես էլ երկակի պարտականություններ: Սակայն չի բացառվում նաև, որ այդ պետություններից մեկը կարող է խտրականություն հանդես բերել երկքաղաքացու նկատմամբ:

Դրա հետ մեկտեղ, գործնականում անհնարին է, որ երկքաղաքացին երկու պետությունների հետ ունենա իրական քաղաքական-իրավական և կայուն կապ: Նա ստիպված նախապատվություն է տալու պետություններից մեկի քաղաքացիությանը կամ խտրականություն է դնելու նրանց միջև: Այս ամենը վերջին հաշվով հանգեցնելու է պետություններից մեկի նկատմամբ անձի ոչ դրական վերաբերմունքի, որը տանելու է երկքաղաքացիության ամլությանը:

Ներկայումս կարևորվում է երկքաղաքացիության միջազգային-իրավական կարգավորման ընդհանուր վիճակի ուսումնասիրությունն ու նրա նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի կատարելագործման և միջազգային պայմանագրերի նորմերի պահանջներին հայկական օրենսդրության համապատաս-

խանությունը ճշգրտելու համար: Երկքաղաքացիության վերաբերյալ Երկքաղաքացիության հարցերի միջազգային-իրավական կարգավորման՝ հատկապես զինապարտության, երկքաղաքացու միջազգային դատական պաշտպանության հետ կապված խնդիրները ներկայումս կարևորում են հատկապես Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիության խնդրի ելակետային դրույթները հրատապ հստակեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության օրենքի մշակման և կիրառման գործընթացում անհրաժեշտ է երկքաղաքացիության հիմնախնդիրների միջազգային կարգավորման փորձի ներդրումը: Որոշ դրույթներ, որոնք վիճահարույց են, պետք է ճշգրտվեն հասարակական քննարկումների և բանիմաց մասնագետների միջոցով:

<sup>1</sup> Տե՛ս Графский В.Г. Всеобщая история права и государства. М., 2002г., էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2004г., էջ 136:

<sup>3</sup> Տե՛ս Сравнительное конституционное право. М., 2002г., էջ 139:

<sup>4</sup> Տե՛ս Черниченко С.В. Теория международного права. М., 1999г., էջ 382:

<sup>5</sup> Տե՛ս Международное публичное право. Сборник документов. В 2т. М., 1996г., Т.1., էջ 184:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 190:

<sup>7</sup> Տե՛ս Договор о Европейском Союзе от 7 февраля 1992г., Европейское право. Учебник для вузов под общ. ред. Л.М. Энтина. М., 2000г., էջ 523-552:

<sup>8</sup> Տե՛ս Договор, учреждающий Европейское Сообщество от 25 марта 1957г., Европейское право. Учебник для вузов под общ. ред. Л.М. Энтина., էջ 562:

<sup>9</sup> Տե՛ս Курс международного права. В 7т. Т.3. М., 1989г., Глава 2 (Черниченко С.В.: Население и международное право). էջ 81:

<sup>10</sup> Տե՛ս Синкевич А.И. Международные договоры, направленные на урегулирование вопросов гражданства. էջ 5:

<sup>11</sup> Տե՛ս Шерер Р. Практика и опыт стран западной Европы в решении вопросов двойного гражданства, Хельсинки, 1994г., էջ 49:

<sup>12</sup> Տե՛ս Законодательные акты о гражданстве, Сост. П.Г. Громушкин М., 1993г., Т.1. էջ 201-211:

<sup>13</sup> Տե՛ս Курс международного права. В 7 т. Т.3. М., 1989г., Глава 2 (Черниченко С.В.: Население и международное право). էջ 81:

<sup>14</sup> Տե՛ս Бояре Ю. Р. Вопросы гражданства в международном праве. М., 1986г., էջ 69:

<sup>15</sup> Տե՛ս Законодательные акты о гражданстве, Сост. П.Г. Громушкин М., 1993г., Т.1. էջ 201-211:

<sup>16</sup> Տե՛ս Бояре Ю.Р. Вопросы гражданства в международном праве. М., 1986г., էջ 103:

<sup>17</sup> Տե՛ս Европейской конвенции о гражданстве (1997г.):

<sup>18</sup> Տե՛ս Бояре Ю.Р. Вопросы гражданства в международном праве. М., 1986г., էջ 103:



## ԱՐԱՅԻԿ ԹՈՒՆՅԱՆ

Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Դատական ակտերը որպես քաղաքացիական իրավունքի աղբյուր ճանաչելու հարցը դասվում է իրավագիտության վիճահարույց հարցերի շարքին: Իրավունքի տեսության մեջ այս խնդրի վերաբերյալ մի շարք դիրքորոշումներ են առաջ եկել: Մեր կարծիքով, դատական ակտերի քաղաքացիական իրավունքի աղբյուրների շարքին դասելու խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ակտերի նորմատիվային բնույթը և նշանակությունը:

Թեև խորհրդային տարիներին նշվում էր դատական որոշումների նորմատիվ բնույթի մասին, այնուամենայնիվ, գիտնականների մեծ մասը դատարանի որոշումները համարում էին իրավակիրառական ակտեր: Այն բացառիկ դեպքերը, երբ դատարանը փաստացի սահմանում էր ըստ էության նորմատիվ դրույթներ, համարվում էին շեղում իրավական համակարգի սկզբունքներից:

Միաժամանակ, գոյություն ունի կարծիք, համաձայն որի՝ նորմատիվ դատական ակտերի գաղափարն ըստ էության հակասում է իշխանությունների բաժանման սկզբունքին: Իրավաստեղծ բնույթի դատական որոշումների առկայությունը նվազեցնում է օրենքի դերը և նշանակությունը<sup>1</sup>:

Մյուս կողմից, մի շարք գիտնականներ դատական ակտերը դասում են իրավունքի աղբյուրների շարքին և փաստորեն ճանաչում դրանց նորմատիվ բնույթը: Ընդ որում, քաղաքացիական իրավունքի աղբյուր են ճանաչվում հիմնականում բարձրագույն դատական ատյանի որոշումները<sup>2</sup>: Սակայն գոյություն ունի տեսակետ, համաձայն որի՝ իրավունքի աղբյուր են հանդիսանում դատական համակարգի ոչ միայն բարձրագույն ատյանի, այլև մյուս դատարանների ակտերը: Մասնավորապես, Ս.Ի. Վիլյանսկու կարծիքով՝ ողջ դատական պրակտիկան հանդիսանում է իրավունքի աղբյուր: Նա նշում է, որ դատական պրակտիկան ապահովում է իրավունքի կիրառման կայունություն և նպաստում դատական վճիռների կանխատեսելիությանը<sup>3</sup>:

Ինչպես հայտնի է, ռոմանո-գերմանական իրավական համակարգին բնորոշ չէ դատական ակտերն իրավունքի աղբյուրների շարքին դասելը: Սակայն համընդհանուր զարգացումը հանգեցնում է իրավական տարբեր համակարգերի ներդաշնակեցմանը և ներազդեցությանը միմյանց վրա:

Արդյունքում, իրավական համակարգերը, որոնք ի սկզբանե դատական ակտերը չեն համարել իրավունքի աղբյուրներ, սկսում



են որպես այդպիսին ճանաչել:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է հնարավորություն՝ նորմատիվ իրավական ակտերը դատական կարգով օրենքին հակասող ճանաչելու համար: Այսինքն՝ դատարանն արդեն իսկ ներգրավված է նեգատիվ իրավաստեղծ գործունեության մեջ, որի ընթացքում վերջինս անվավեր ճանաչելով այս կամ այն նորմը, փաստորեն ընդունում է քաղաքացիական ոլորտի նորմատիվ բնույթի որոշումներ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը նորմատիվ իրավական ակտերի շարքին է դասել նաև դատական որոշումները:

Հարկ է նշել, որ դատաիրավական բարեփոխումների արդյունքում փոփոխվեց նորմատիվ իրավական ակտերն օրենքին հակասող և անվավեր ճանաչելու գործընթացը: Եթե նախկինում դատարանի անունից գործող միանձնյա դատավորը կարող էր որոշել կոլեգիալ մարմնի (օրինակ՝ ՀՀ կառավարության) կողմից կայացված որոշման ճակատագիրն, ապա այսօր, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ և 137-րդ հոդվածների համաձայն՝ իրավական ակտերն օրենքին հակասող ճանաչելու գործերը ենթակա են քննության վարչական դատարանի կողմից, որը հանդես է գալիս դատարանի հինգ դատավորի կազմով:

Դատական ակտերը որպես քաղաքացիական իրավունքի աղբյուր դիտարկելիս՝ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ քաղաքացիաիրավական ոլորտում անհամեմատ շատ են իրավիճակները, երբ բացակա-

յում է տվյալ հարաբերությունները կարգավորող իրավական նորմը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ նորմի բացակայությունը չի ազատում դատարանին գործը քննելու և վեճի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու պարտականությունից: Այդ պատճառով քաղաքացիաիրավական ոլորտում անհամեմատ շատ են իրավունքի և օրենքի անալոգիայի կիրառման դեպքերը, որոնք հաճախ կարող են հիմք հանդիսանալ այլ դատարանների կողմից նմանատիպ վեճեր լուծելու համար:

Դատական ակտերը որպես իրավունքի աղբյուր դիտարկելու խնդիրը նոր շունչ ստացավ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի նոր խմբագրության համաձայն՝ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը<sup>4</sup>:

Այս փոփոխությունը հիմք հանդիսացավ խոսելու այն մասին, որ Հայաստանում սահմանադրության մակարդակով դատական նախադեպը ճանաչվում է որպես իրավունքի աղբյուր:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ հազվադեպ է կիրառվում «դատական նախադեպ» հասկացությունը: Մասնավորապես, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի համաձայն. «Կարգավորողի որոշումները և եզրակացությունները դատարանի կողմից կարող են ապօրինի ճանաչվել և բեկանվել, եթե կայացել են դատական նախադեպերի խախտմամբ»<sup>5</sup>:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ բացակայում են դատական նախադեպի իրավական կարգավիճակի և դրա՝ որպես իրավունքի աղբյուր ճանաչելու մասին դրույթներ:

Այս առումով հիմնավորված չէ անգլո-սաքսոնական իրավական համակարգի ձևով դատական նախադեպը Հայաստանի Հանրապետությունում որպես քաղաքացիական իրավունքի աղբյուր դիտարկելը:

Դատական նախադեպի գաղափարն, ունենալով անվիճելի առավելություններ, այն է՝ օրենքի գերակայությանը, դատական որոշումների կանխատեսելիությանը, հավասարության սկզբունքի ապահովմանը նպաստելը, այնուամենայնիվ, իրավակիրառական տեսանկյունից կարող է ի հայտ բերել որոշակի բացասական դրսևորումներ: Այդ առումով դատական նախադեպի գաղափարի կիրառումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պետք է գուցորդվի խնդիրների խորն ուսումնասիրությամբ, որից հետո, անհրաժեշտության դեպքում, հնարավոր կլինի նախատեսել համապատասխան օրենսդրական լուծումներ:

Ինչպես հայտնի է, դատական նախադեպն առաջացել է Անգլիայում, որտեղ գործում էր ընդհանուր իրավունքը:

Անգլիական իրավունքի յուրահատկությունն այն է, որ պատմական որոշակի փուլում որպես ընդհանուր իրավունքին հակակշիռ առաջացավ «արդարության իրավունքը»: Այդ նորամուծությունը թույլ էր տալիս անդրադառնալ անմիջականորեն թագավորի խղճին, հույս ունենալով հարցը լուծել «արդարացի» այն դեպքերում, երբ լուծումն «ըստ օրենքի», այսինքն՝ ընդհանուր իրա-

վունքի համաձայն, չէր երաշխավորում բավարար արդյունքներ<sup>6</sup>:

Այսինքն՝ դասական դոկտրինի համապատասխան, դատարանը նախադեպ է ստեղծում իրավական նորմի բացակայության պայմաններում կամ նախադեպի միջոցով տալիս սկզբունքորեն նոր լուծումներ: Որպես կանոն, դատական նախադեպերի միջոցով իրականացվում է օրենսդրական բացերի լրացում:

Մյուս կողմից, դատական նախադեպերի շարքին են դասվում նաև դատարանի կողմից օրենսդրական ակտերի պարզաբանումները<sup>7</sup>:

Այդ իսկ պատճառով, դատական նախադեպը հարկ է դիտարկել երկու հարթություններում: Առաջինը՝ դատական նախադեպը սահմանում է նորմատիվ ակտերով չնախատեսված կարգավորման նոր հնարավորություն՝ հաղթահարելով օրենսդրության բացերը: Երկրորդը՝ դատական նախադեպը տալիս է պարզաբանումներ և պարունակում է նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանություններ<sup>8</sup>:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգն օրենքի միատեսակ կիրառության ներքո առաջնահերթ հասկանում է նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանությունները: Նման պարագայում նախադեպի գաղափարը կիրառելի է այնքանով, որքանով վերաբերում է «նախադեպային մեկնաբանություններին», այսինքն՝ մեկնաբանությունը պետք է հենվի օրենքի վրա և ուղղակիորեն բխի օրենքի դրույթներից:

Այդ իսկ պատճառով, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի տեսանկյունից առավել ընդունելի է խոսել ոչ

թե դատական նախադեպերի, այլ նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերի մասին:

Վերոնշյալ մոտեցման շրջանակներում նախադեպային որոշումներ կայացնելու սահմանները դառնում են առավել կանխատեսելի:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ նախադեպային նշանակության դատական ակտերն իրենց բնույթով կարող են դասվել քաղաքացիական իրավունքի աղբյուրների շարքին, հարկ է դրանք դիտարկել իրավունքի աղբյուրների ողջ համակարգի համատեքստում: Քաղաքացիական իրավունքի աղբյուրների համակարգում նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերի դերը և տեղը որոշելու համար օրենսդրական մակարդակով սահմանման անհրաժեշտություն է առաջանում: Ընդ որում, տվյալ խնդիրն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից:

1) Նախադեպային նշանակության դատական ակտերը պետք է պարտադիր լինեն բոլոր ստորադաս դատարանների համար, որոնք պարտավոր են հետևել դրանց՝ քաղաքացիաիրավական վեճեր լուծելիս: Նախադեպային նշանակության դատական ակտին չհետևելը՝ պետք է հիմք հանդիսանա ստորադաս դատարանների վճիռները բեկանելու համար: Սակայն համապատասխանության հարցը պետք է որոշի միայն վերադաս դատարանը, որը կայացրել է նախադեպային նշանակության դատական ակտը:

2) Ճանաչելով նախադեպային նշանակության դատական որոշումների նորմատիվային բնույթը՝ անհրաժեշտ է հստակ սահմանել այդ որոշումների իրավական ուժն

այլ աղբյուրների համակարգում, հաշվի առնելով նաև այն, որ իրավունքի աղբյուրները հասարակական հարաբերությունների կարգավորման հիմք են հանդիսանում՝ ոչ միայն դատական կարգով վեճերը լուծելիս: Մասնավորապես, իրավական տեսանկյունից ինչճակատագիր պետք է ունենա ենթաօրենսդրական ակտը, եթե այն չի համապատասխանում նախադեպային նշանակության դատական որոշմանը:

Առաջին հայացքից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ վերոհիշյալ հարցադրումը հիմնավորված չէ, քանի որ ցանկացած պարագայում նախադեպային նշանակության դատական որոշումը պետք է բխի օրենքի դրույթների պահանջներից, և տվյալ դեպքում խոսքը պետք է վերաբերի ենթաօրենսդրական ակտի համապատասխանեցումը կամ անհամապատասխանեցումը ոչ թե նախադեպային նշանակության դատական որոշմանն, այլ բուն օրենքին:

Սակայն հայտնի է, որ նախադեպային մեկնաբանությունները կարող են էապես փոխել օրենքի բովանդակությունն, ինչի հետևանքով կարող է նշանակալի տարբերություն առաջանալ օրենքի բովանդակության և դատարանների կողմից տրված մեկնաբանությունների միջև<sup>9</sup>:

Այդ առումով տեսականորեն հնարավոր է օրենքի և դատական ակտերի (որպես իրավունքի աղբյուրների) մրցակցություն:

Հարցն ավելի կարևոր է դառնում քաղաքացիական իրավունքի ոլորտում, որտեղ հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր մանրուք կարող է վճռորոշ դեր ունենալ:

Հարկ է նշել նաև, որ գոյություն ունի

օբյեկտիվ մտավախություն այն մասին, որ նախադեպային նշանակության դատական որոշումների պարբերաբար աճող քանակը դատական որոշումների համակարգում անհամապատասխանությունների կհանգեցնի: Չեն բացառվում այնպիսի դեպքեր, երբ միևնույն իրավական նորմի վերաբերյալ ընդունվեն մի քանի նախադեպային դատական որոշումներ, ներառյալ այն դեպքերը, երբ նույն նորմի վերաբերյալ տրվում են տարբեր մեկնաբանություններ:

Այդ առումով հատկանշական է անգլիական իրավական համակարգի օրինակը, որտեղ ներկայումս գոյություն ունեն 400 հազարից ավելի դատական նախադեպեր: Նման պարագայում, հիմք ընդունելով որևէ նախադեպ, դատարանը կարող է հաշվի չառնել նմանատիպ այլ նախադեպերը, որոնք առավել համապատասխանում են տվյալ գործի հանգամանքներին: Բացի այդ, կարող են լինել դեպքեր, երբ նույն հարցի վերաբերյալ ընդունվում են միմյանց հակասող նախադեպեր, որոնք սահմանվել են դատարանի անուշադրության (*per incuriam*՝ այսինքն՝ նախադեպ սահմանելիս, դատարանը հաշվի չի առել արդեն իսկ գոյություն ունեցող նախադեպը) հետևանքով<sup>10</sup>:

Նախադեպային համակարգի զարգացման պայմաններում միմյանց հակասող նախադեպերի սահմանման հնարավորությունը դառնում է անխուսափելի: Այդ մասին է վկայում նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից նախադեպերի սահմանման գործընթացը: Մասնավորապես՝ հայտնի են դեպքեր, երբ Եվրոպական դատարանը նմանատիպ բողոքների կապակցությամբ ընդունել է իրարամերժ որոշումներ<sup>11</sup>:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի տեսանկյունից իրավական լուծում է պահանջում հետևյալ խնդիրը. նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերի միջև հակասություններ հայտնաբերելու դեպքում ո՞ր նախադեպը պետք է կիրառվի կոնկրետ հարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք նախադեպային նշանակության դատական ակտերի նկատմամբ կիրառելի են «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում դրանց իրավաբանական ուժը որոշելու կանոնները: Ըստ վերոհիշյալ օրենքի՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում ենթակա է կիրառման ավելի վաղ ընդունված ակտը:

Այլ իրավական համակարգերում վերոնշյալը հատուկ նորմերի բացակայության պարագայում, որպես կանոն գործում է ավելի ուշ ընդունված իրավական ակտը: Միաժամանակ, գրականության մեջ գոյություն ունի տեսակետ նաև այն մասին, որ անկախ այլ իրավական ակտերի նկատմամբ կիրառվող կանոններից՝ «դատական նախադեպերի միջև հակասությունների դեպքում պետք է գործի առավել վաղ ընդունված նախադեպը: Հետագայում ընդունված հակասող բոլոր նախադեպերը պետք է համարվեն անվավեր, և բոլոր այն գործերը, որոնք կընդունվեն այդ նախադեպերը հիմք ընդունելով, հետո կարող են վիճարկվել դատական կարգով»<sup>12</sup>:

Հատկանշական է, որ Անգլիայի իրավական համակարգի տեսանկյունից դատական նախադեպերի միջև հակասությունների

դեպքում կիրառվում է այն նախադեպը, որն ընդունվել է ավելի ուշ:

Տարաբնույթ մեկնաբանություններից զերծ մնալու համար նպատակահարմար է օրենսդրորեն կարգավորել այս հարցը, և հստակ սահմանել հակասությունների պարագայում իրավական հետևանքները: Դա առավել կանխատեսելի կդարձնի դատարանների գործունեությունը և բարենպաստ ազդեցություն կունենա արդարադատության իրականացման վրա:

Նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտը որպես քաղաքացիական իրավունքի աղբյուր և նորմատիվ իրավական ակտ դիտարկելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել դատական ակտերի առանձնահատկությունները:

Ի տարբերություն այլ նորմատիվ իրավական ակտերի, օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը, որպես կանոն, չի կարող փոփոխվել, անգամ՝ այն ընդունած դատարանի կողմից:

Այդ իսկ պատճառով, օրինական ուժի մեջ մտած նախադեպային նշանակության դատական որոշումները որոշակի դեպքերում կարող են կաշկանդել դրանք ընդունած դատարանի գործողություններն, ինչը բացասական ազդեցություն կարող է ունենալ արդարադատության իրականացման վրա:

Այս խնդիրներից խուսափելու համար ընդհանուր իրավունքի երկրներում կիրառվում է «փաստերի անալոգիայի» սկզբունքը: Այսինքն՝ անհրաժեշտության դեպքում, դատարանը փաստական հանգամանքների տարբերության հիմքով կարող է շրջանցել «անհարմար» նախադեպը<sup>13</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի

Հանրապետությունում անհրաժեշտություն կա օրենսդրական մակարդակով կարգավորել որոշակի հանգամանքներում դատական նախադեպերի փոփոխման հնարավորության հետ կապված հարցերը: Մասնավորապես, այդպիսի հանգամանքների շարքին կարող են դասվել դատական որոշման կայացման պահից որոշակի ժամկետ անցնելն, այլ օրենքների ընդունումը կամ միջազգային իրավական փաստաթղթերին միանալը, որոնք անուղղակի կարող են ազդեցություն ունենալ կայացված մեկնաբանությունների վրա և այլն:

Այս առումով հատկանշական է անգլիական իրավական համակարգի փորձը, որտեղ երկրի դատական բարձրագույն ատյանի՝ լորդերի պալատի դատավորները իրավասու են ոչ միայն վերացնել կամ փոփոխել ստորադաս դատարանի ակտերն, այլև վերջերս մմանատիպ հնարավորություն են ստացել սեփական որոշումների նկատմամբ<sup>14</sup>:

Խոսելով Հայաստանի Հանրապետությունում նախադեպային նշանակության դատական ակտերի համակարգի ձևավորման և զարգացման մասին՝ հարկ է հաշվի առնել նաև Հայաստանում օրինաստեղծ գործընթացի առանձնահատկությունները: Մասնավորապես, ինչպես օրենքներն, այնպես էլ նորմատիվ իրավական այլ ակտեր ենթարկվում են հաճախակի փոփոխությունների: Դա պայմանավորված է հիմնականում օբյեկտիվ պատճառներով, այն է՝ Հայաստանում ընթանում է արդի օրենսդրական դաշտի ձևավորման գործընթաց: Միաժամանակ, որոշ դեպքերում օրենսդրական ակտերի փոփոխությունները կրում են հստակեցնող բնույթ. ճշտվում է այս կամ այն իրավական

եզրույթի սահմանումը, հստակեցվում է իրավական նորմի բովանդակության շարադրանքը և այլն:

Նման պայմաններում կարող են հարցեր առաջանալ՝ կապված նախադեպային նշանակության դատական որոշումների իրավաբանական ուժի հետ: Մասնավորապես, նման դեպքերում ինչպե՞ս որոշել այն սահմանը, երբ օրենքի խմբագրական փոփոխությունը հանգեցնում է դատական ակտի նշանակության փաստացի կորստի: Այս խնդիրների կամայական մեկնաբանությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ դատական ակտերի կանխատեսելիության վրա:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով՝ օրենքների նորմերի խմբագրական փոփոխությունների դեպքերում դատարանը կարող է հիմնավորել, որ այդ փոփոխությունները հանգեցրել են նորմերի իմաստային փոփոխության և նախադեպային նշանակության դատական ակտերում նախկինում տրված մեկնաբանություններն այլևս չեն բխում իրավական ակտի պահանջներից և այլևս չեն համապատասխանում օրենսդրի կամքին: Նման դեպքերում հնարավոր է խոսել նախադեպային նշանակության դատական ակտի գործողության դադարման մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել. իհարկե, քաղաքացիական իրավունքի բնագավառում դատական ակտերի նորմատիվային բնույթն ուսումնասիրելիս առաջին հերթին շեշտը պետք է դրվի Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի որոշումների վրա, մասնավորապես այն որոշումների, որոնք պարունակում են իրավական ակտերի դրույթների մեկնաբանություններ:

Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնք պարունակում են քաղաքացիական իրավունքի բնագավառի նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանություններ կամ անվավեր են ճանաչում օրենսդրական ակտերի դրույթները, նույնպես պետք է դասվեն քաղաքացիական իրավունքի նորմատիվ բնույթ ունեցող աղբյուրների շարքին:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, նորմատիվային նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի այն որոշումները, որոնցով անվավեր են ճանաչում քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող ենթաօրենսդրական ակտերը կամ դրանց դրույթները:

Եվ վերջապես, դատական ակտերի նորմատիվային բնույթի մասին խոսելիս, հարկ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները)<sup>15</sup>:

Իրավահավասարության տեսանկյունից միանշանակ դրական դեր ունեցող այս նորմը միաժամանակ կարող է հիմք հանդիսանալ՝ խոսելու քաղաքացիաիրավական գործերով օրինական ուժի մեջ մտած ցանկացած դատարանի որոշման նորմատիվային բնույթի մասին, մասնավորապես այն դեպքե-

րում, երբ սպառվել են բոլոր հնարավորությունները վերադասության կարգով վերանայելու համար: Փաստորեն, եթե ուժի մեջ մտած դատական որոշումը սահմանված ժամկետում չի բողոքարկվում վճռաբեկության կարգով, ապա այդ դատական որոշումը կարող է ստանալ նորմատիվ հատկանիշներ: Իհարկե, չի բացառվում, երբ նման որոշման մեջ ամրագրված մեկնաբանություններն ի վերջո փոփոխվեն՝ այդ մեկնաբանությունների վրա հիմնված մեկ այլ դատական ակտը վերադա-

սության կարգով վերանայվելու հետևանքով:

Եզրափակելով՝ կարելի է պնդել, որ դատական ակտերի նորմատիվային բնույթի հետ կապված հարցերը կարևոր նշանակություն ունեն իրավական ողջ համակարգի համար: Այդ խնդիրների հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունն առավել արդիական է դառնում քաղաքացիաիրավական ոլորտում ոչ տիպային գործերով դատական որոշումների քանակի ավելացմանը զուգահեռ:

<sup>1</sup> Տե՛ս Спектор Е.И. Судебный прецедент как источник права. Журнал Российского права, 2005г., N 5, էջ 94:

<sup>2</sup> Ըստ ՀՀ Սահմանադրության 92-րդ և 93-րդ հոդվածների, բարձրագույն դատական ատյաններն են՝ վճռաբեկ դատարանը և ՀՀ սահմանադրական դատարանը՝ սահմանադրական արդարադատության հարցերով:

<sup>3</sup> Տե՛ս Спектор Е.И. Судебный прецедент как источник права. Журнал Российского права, 2005г., N 5, էջ 89:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր 2005թ., հատուկ թողարկում, 05.12.2005թ.:

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր 2005/54 (426), 24.08.2005թ.:

<sup>6</sup> Տե՛ս Хапов А.В. Источники английского общего права: судебные прецеденты. Журнал Российская юстиция, 2006г., N 3, էջ 63:

<sup>7</sup> Տե՛ս Գամբարյան Ս. Գատական մախաղեարդ որպես իրավունքի աղբյուր: Հոդվածների ժող. Եր., Տիգրան Մեծ, 2005թ., էջ 18:

<sup>8</sup> Տե՛ս Спектор Е.И. Судебный прецедент как источник права. Журнал Российского права, 2005г., N 5, էջ 95:

<sup>9</sup> Տե՛ս Богдановская И.Ю. Судебный прецедент – источники права. Журнал Государство и право. 2002г., N 12., էջ 9:

<sup>10</sup> Տե՛ս Хапов А.В. Источники английского общего права: судебные прецеденты. Журнал Российская юстиция, 2006г., N 3, էջ 65:

<sup>11</sup> Տե՛ս Карапетян Л.М. Метамарфозы в решениях Европейского Суда по правам человека. Журнал Российского права, 2005г., N 7, էջ 107:

<sup>12</sup> Տե՛ս Хапов А.В. Источники английского общего права: судебные прецеденты. Журнал Российская юстиция, 2006г., N 3, էջ 65:

<sup>13</sup> Տե՛ս Апарова Т.В. Суды и судебный процесс Великобритании. Англия, Уэльс, Шотландия. М., Институт международного права и экономики. Изд. «Триада, Лтд», 1996г., էջ 14:

<sup>14</sup> Տե՛ս Хапов А.В. Источники английского общего права: судебные прецеденты. Журнал Российская юстиция, 2006г., N 3, էջ 65:

<sup>15</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2007 / 20 (544), 18.04.2007թ.:



**ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՍՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ



**ԱԻՐԱ ԻՍԿՈՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՄԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՊՃ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

1991 թվականին ԽՍՀՄ փլուզման, պետության և հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների և շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացում, ինչպես նորանկախ Հայաստանի Հանրապետության, այնպես էլ նախկին ԽՍՀՄ անդամ-պետությունների սոցիալ-տնտեսական և էկոլոգիական իրավիճակը բնորոշելու համար կարելի է առանձնացնել որոշակի գործոններ, որոնք առաջնային նշանակություն ունեին պետության էկոլոգիական քաղաքականության զարգացման և շրջակա միջավայրի օրենսդրության ներկայացման տեսանկյունից: Դրանք նախ և առաջ կապված էին ԽՍՀՄ տնտեսական և էկոլոգիական ժառանգության, շրջակա միջավայրի նկատմամբ հասարակության գուտ սպառողական վերաբերմունքի, էկոլոգիականի նկատմամբ տնտեսական շահի գերակա-

յության, պետական բնապահպանական մարմինների ոչ հետևողական գտնվելու հետ, այսինքն՝ նշված պետություններում առկա էր տնտեսական և էկոլոգիական խնդիրների համադրության խիստ անբարենպաստ վիճակ: Իսկ շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ հետխորհրդային շրջանի Հայաստանի Հանրապետության օրենսդրության վիճակը բնութագրվում էր խորհրդային շրջանի օրենքների ավանդական շարունակությամբ, օրենսդրական նորմերի գուտ դեկլարատիվ բնույթով, օրենսդրական ակտերի կիրառման մեխանիզմների բացակայությամբ, որոշ օրենսդրական ակտերի լուրջ հակասությամբ<sup>1</sup>:

Չնայած ստեղծված բարդ իրավիճակին, բոլոր երկրներում էլ քաջ գիտակցում էին, որ շրջակա միջավայրի պահպանությունը, դրա որակի ապահովումը, բնական պա-



շարճերի ռացիոնալ օգտագործումն ունի մի կարևոր նպատակ, այն է՝ ապահովել մարդու հիմնական՝ կյանքի իրավունքը, որն ամրագրված էր դեռևս 1948 թվականին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»<sup>2</sup>: Ելնելով այդ խնդիրներից՝ պատահական չէ, որ 1972 թվականին Ստոկհոլմում հրավիրված կոնֆերանսին ընդունված «Սկզբունքների հռչակագրի» 1-ին սկզբունքն ամրագրել էր մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման առաջին ու խիստ կարևոր քայլը՝ ստանալ և իրագրել սեփական կյանքի և գործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական տեղեկատվություն, որն իր հետագա զարգացումը գտավ 1992 թվականի Ռիոյի հռչակագրում՝ որպես 10-րդ սկզբունք: Էկոլոգիական տեղեկատվություն ստանալով՝ հնարավորություն էր ստեղծվում մասնակցել միայն շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու գործընթացին, ինչը ևս կարևոր նախապայման էր հանդիսանում շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ապահովման համար:

Իհարկե, անկախության հռչակումը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լայն հնարավորություններ էր ընձեռում երկրի ներսում լուրջ փոփոխությունների և այլ պետությունների հետ համագործակցության արդյունքում շարժվել էկոլոգիական կայուն օրենսդրություն ստեղծելու, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության, կյանքի որակի բարձրացման ճանապարհով<sup>3</sup>:

1991 թվականի դեկտեմբերի 8-ին, Բեյրութի Հանրապետության, Ռուսաստանի

Ֆեդերացիայի և Ուկրաինայի կողմից ստորագրված, ապա 1992 թվականի փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած «Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին» համաձայնագրի նպատակներից մեկը հանդիսանում էր պետությունների կողմից իրենց ժողովուրդների և պետությունների իրավահավասար և փոխշահավետ համագործակցության զարգացումն, ինչպես նաև առողջապահության և շրջակա միջավայրի բնագավառներում լայնածավալ տեղեկատվության փոխանակման աջակցությունը (հոդված 4)<sup>4</sup>: Ըստ վերոնշյալ համաձայնագրի 7-րդ հոդվածի. «Բարձր պայմանավորվող կողմերն ընդունում են, որ իրավահավասար սկզբունքներով իրականացվող համագործակցության ոլորտներն ընդգրկում են շրջակա միջավայրի պահպանությունը, մասնակցությունն էկոլոգիական անվտանգության համընդհանուր, միջազգային համակարգի ստեղծմանը»:

Սակայն, ինչպես նշվում է Տեղեկատրվական-իրավական համագործակցության բնագավառում Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության ֆեդերալ մարմինների և ԱՊՀ անդամ-պետությունների իշխանության մարմինների փոխհամագործակցության ծրագրի 1.1 կետում<sup>5</sup>, ԱՊՀ պետությունների միջև սոցիալ-տնտեսական կապերի ինտեգրման ընդլայնմանը խոչընդոտում է ԱՊՀ անդամ-պետությունների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի մասին ամբողջական տեղեկատվության բացակայությունն, ինչը զգալիորեն խանգարում է ԱՊՀ անդամ-պետությունների ազգային օրենսդրությունների մերձեցման ուղղությամբ տարվող աշխատանքներին: Այս կարևոր հիմ-

նախնդրի լուծման հետ կապված՝ առաջ է գալիս նշված պետություններում էկոլոգիական հարաբերությունների իրավական կարգավորման ուղղությունների զարգացման, այդ կարգավորման ընդհանուր վիճակի մասին հարցերի ուսումնասիրության խնդիրը: Համապատասխանաբար, առաջանում է ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրությունների համեմատական վերլուծության անհրաժեշտությունը, որոնք հանդիսանում են այդ պետություններում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտեր, որոնց հիման վրա կառուցվում է ողջ օրենսդրությունը և, հետևաբար, ձևավորվում են էկոլոգիական հարաբերությունների իրավական կարգավորման հիմքերը:

ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրությունները վերլուծության կարևորագույն օբյեկտ են համարվում նաև այն պատճառով, որ ԱՊՀ բոլոր անդամ-պետությունները պատմականորեն ներգրավված են եղել միասնական իրավական համակարգի մեջ: Բացի այդ, ԱՊՀ ստեղծման ժամանակաշրջանում այդ պետություններում էկոլոգիական հարաբերությունների իրավական կարգավորումը նույն մակարդակի վրա էր, քանի որ մինչ ԽՍՀՄ փլուզումը հանրապետական օրենսդրությունը հիմնված էր միասնական միութենական օրենսդրության վրա: Այդ հարցում շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ ԱՊՀ կազմի մեջ մտած պետություններն ունեն ընդհանուր սահմաններ, ուստի և շատ հարցերում առկա են համանման, իսկ որոշ հարցերում նույնիսկ ընդհանուր էկոլոգիական հիմնախնդիրներ: Պետություններն էլ գիտակցում էին, որ այս պարագայում միայնակ գործելն արդյունավետ

չէ, քանի որ բնությունն ընդհանուր է, հիմնված է ընդհանուր սկզբունքների վրա և սահմաններ չի ճանաչում:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ ԱՊՀ անդամ-պետություններում նշված ժամանակահատվածում ստեղծվում էր հիմնովին նոր էկոլոգիական օրենսդրություն, ուստի անհրաժեշտ էր հնարավորինս արդյունավետ օգտագործել էկոլոգիական հիմնախնդիրների՝ փոխհամաձայնեցված իրավական լուծումներ գտնելու հնարավորությունն՝ ի շահ համընդհանուր առողջ էկոլոգիական միջավայրի<sup>6</sup>: Իսկ հասարակության կայուն զարգացումն ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը եղել և մինչ օրս համարվում է գլխավոր հիմնախնդիր<sup>7</sup>:

ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրությունների տեքստերում տարբեր կերպ են ներկայացված էկոլոգիական հարաբերությունների իրավական կարգավորման հիմքերը: Բնականաբար, դրանք չեն էլ կարող ամբողջությամբ նույնը լինել: Սակայն դրանցում առկա են որոշ ընդհանուր մոտեցումներ, ինչը հնարավորություն է տալիս ԱՊՀ անդամ-պետությունների էկոլոգիական օրենսդրության ձևավորմանը և զարգացմանն ուղղված բոլոր սահմանադրական նորմերը, որոնք կապված են էկոլոգիական գործունեության իրականացման հետ, պայմանականորեն միավորել հետևյալ խմբերում.

1. այս խմբում կարծում ենք պետք է ընդգրկել այն բոլոր նորմերը, որոնք ուղղակի սահմանում են էկոլոգիական իրավունքներ, դրանց իրականացման երաշխիքներ: Այդ խմբում անհրաժեշտ է առաջնային տեղը տալ հիմնարար էկոլոգիական իրավունքին՝ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու

իրավունքին և այնպիսի պարտականության, ինչպիսին է բնությունն ու շրջակա միջավայրը պահպանելու, բնության հարստություններին խնայողաբար վերաբերվելու քաղաքացիների պարտականությանը: Այս խմբի մեջ արդարացի ենք համարում դասել նաև շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու իրավունքն, անձի առողջությանը կամ գույքին էկոլոգիական իրավախախտման հետևանքով հասցրված վնասի հատուցման իրավունքը:

2. Էկոլոգիական իրավունքների անուղղակի առնչվող նորմեր: Սրանք այն նորմերն են, որոնք միջնորդավորված ձևով նպաստում են հասարակություն-բնություն փոխհարաբերությունների կարգավորմանը:

Այս խմբի մեջ ներգրավված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են կյանքի իրավունքն, առողջության պահպանման իրավունքը, սեփականության իրավունքը և այլն: Այս նորմերից մի քանիսն ունեն կանխարգելիչ բնույթ, ինչպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 31-ով նախատեսված այն դրույթը, համաձայն որի՝ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

3. Ընդհանուր նորմեր: Այս դրույթներն ունեն ինքնուրույն նշանակություն, բայց միաժամանակ նախատեսված են նպաստելու հասարակություն-բնություն փոխհարաբերությունների զարգացմանն, ապահովում են էկոլոգիական իրավունքում առանձին իրավական ինստիտուտների էֆեկտիվ գործունեությունը, բարձրացնում են էկոլոգիական

իրավանորմերի կիրառման արդյունավետությունը:

Այդպիսի նորմերից է, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 18-ով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, որը Հայաստանի Հանրապետությունում սահմանված է յուրաքանչյուրի համար: Ինչպես տեսնում ենք, այս նորմը հանդես է գալիս որպես ցանկացած իրավունքի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը նախատեսված էկոլոգիական իրավունքների պաշտպանության երաշխիք: Այս խմբում կարելի է ընդգրկել նաև ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու իրավունքն, իրենց շահերի պաշտպանության համար միավորվելու իրավունքն, առանց զենքի, խաղաղ երթերի, ցույցերի, հավաքների իրավունքն, անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը և այլն:

Վերոհիշյալ նորմերի առավել խորը վերլուծության նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է դրանցից որոշներին առանձին անդրադառնալ:

Բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքն այս կամ այն ձևակերպմամբ ամրագրված է ԱՊՀ անդամ-պետություններից գրեթե բոլորի սահմանադրություններում: Այն իր տեղը չի գտել միայն Ղազախստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի սահմանադրություններում:

Հարկ ենք համարում նշել, որ բարեկե-

ցիկ շրջակա միջավայրի իրավունքն իրենց պետությունների սահմանադրություններում ամրագրելու լայն տենդենց է նկատվում ողջ աշխարհում: Տվյալ իրավունքն իր արտացոլումն է գտել արտասահմանյան երկրներից բոլորի սահմանադրություններում, թեև ունի տարբեր ձևակերպումներ: Օրինակ՝ Բրազիլիայի Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի «էկոլոգիապես հավասարակշռված շրջակա միջավայրի իրավունքն», իսկ Հարավային Կորեայի Սահմանադրությունն ամրագրում է «առողջ և հաճելի շրջակա միջավայրի իրավունքը»<sup>8</sup>: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրենց սահմանադրություններում բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքն ամրագրած ԱՊՀ անդամ-պետությունները հետևում են միջազգային զարգացմանը և ընտրել են առաջընթացի ճանապարհը: Սակայն, ինչպես վերը նշվեց, այս իրավունքն ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրություններում ևս ունի տարբեր ձևակերպումներ. մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.2 հոդվածը հռչակում է<sup>9</sup>, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում...: Մոլդովայի Սահմանադրության 37-րդ հոդվածը երաշխավորում է. «բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքը և կյանքի ու առողջության համար էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրի իրավունքն», Ադրբեջանի Սահմանադրությունում ամրագրված է «առողջ շրջակա միջավայրի պայմաններում ապրելու իրավունքը» (39-րդ հոդված, մաս 1): Բելոռուսի և Ռուսաստանի Դաշնության սահմանադրություններն այս իրավունքի արտահայտման

խնդրում ունեն համանման մոտեցում. մասնավորապես, Բելոռուսի Սահմանադրության հոդված 46-ի Բ և Ռ-ուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 42-ում ամրագրված է յուրաքանչյուրի բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքը: Վրաստանի Սահմանադրությունը երաշխավորում է առողջության համար անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը (հոդված 37, մաս 3), Կիրգիզիայի Սահմանադրությունում՝ կյանքի և առողջության համար բարեկեցիկ շրջակա բնական միջավայրի իրավունքն (հոդված 35, մաս 1), իսկ Ուկրաինայի Սահմանադրությունում՝ կյանքի և առողջության համար անվտանգ շրջակա միջավայրի իրավունքը (հոդված 50):

Մեր կարծիքով, ելնելով այն հանգամանքից, որ ներկայումս ԱՊՀ անդամ բոլոր պետությունները, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության և Ուզբեկստանի, հանդիսանում են 1998 թվականին Օրիուսում ընդունված «Էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ» կոնվենցիայի կողմեր, առավել արդարացի կլինեն իրենց սահմանադրություններում հնարավորինս ամրագրելն այն ձևակերպումը, որն այդ իրավունքի առնչությամբ տրված է վերոհիշյալ կոնվենցիայի նախաբանում. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում և պարտավոր է ինչպես անհատապես, այնպես էլ այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրն՝ ի բարօրություն

ներկա և ապագա սերունդների»<sup>10</sup>:

ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրություններում սահմանված է նաև շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը: Ընդ որում, տարբեր պետությունների սահմանադրություններում այն հասցեագրված է տարբեր սուբյեկտների. ա) քաղաքացիների, բ) յուրաքանչյուրի կամ բոլորի, գ) պետության համար, նրա գործունեության կոնկրետ տեսակներն ամրագրելով, պետության պատասխանատվության կամ պետության նպատակի տեսքով:

Ուշագրավ է, որ նման պարտականությունն առկա է ԱՊՀ անդամ-պետություններից բոլորի սահմանադրություններում, եթե նույնիսկ բացակայում է բարեկեցիկ շրջակա միջավայրի համապատասխան իրավունքի սահմանադրական ամրագրումը: Զենարկվող պարտականությունն իր բնույթով ինչպես պոզիտիվ, այսինքն՝ սահմանում է կատարել որոշակի գործողություններ, այնպես էլ նեգատիվ է, այն է՝ բովանդակում է որոշակի գործողություններից զերծ մնալու պահանջ: Հայաստանի Հանրապետությունում այս պարտականությունն ընդգրկված է համանման իրավունքն ամրագրող հոդվածում, մասնավորապես, յուրաքանչյուր ոք ... պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը (հոդված 33.2): Բելոռուսի, Ադրբեջանի, Մոլդովայի և Վրաստանի սահմանադրությունները որպես նախատեսված գործողությունների կատարման անհրաժեշտություն ընդգծում են բնական միջավայրը պահպանելու պարտականությունը: Դազախստանի Սահմանադրությունն այդ պարտականությունը ձևակերպում է հետևյալ կերպ. «պահպանել բնությու-

նը և հոգատար վերաբերվել բնական հարստություններին»: Համանման կերպով այդ պարտականությունն ամրագրում են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը՝ պահպանել բնությունը և շրջակա միջավայրը, հոգատար վերաբերվել բնական հարստություններին, Ուզբեկստանի Սահմանադրությունը՝ հոգատար վերաբերվել շրջակա բնական միջավայրին: Դրոգատանի Սահմանադրությունը որպես պարտականություն սահմանում է շրջակա միջավայրին, բնական հարստություններին հոգատար վերաբերվելը, Տաջիկստանի Սահմանադրությունը՝ բնությունը պահպանելու պարտականությունը:

Ուկրաինայի Սահմանադրությունն ամրագրել է համապատասխան պարտականության նեգատիվ ձևակերպումը՝ բնությանը վնաս չհասցնելու պարտականությունը:

Որոշ երկրների սահմանադրություններում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում որոշակի գործողություններ կատարելու պարտականությունը վերագրված է նաև պետություններին, մասնավորապես, ըստ Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրության 10-րդ հոդվածի. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»: Ըստ էության այս դրույթն ամրագրում է պետության էկոլոգիական գործառույթը: Բելոռուսի Սահմանադրությամբ՝ պետությունը վերահսկողություն է իրականացնում բնության ռեսուրսների ռացիոնալ օգտագործման նկատմամբ կենսապայմանների պաշտպանության և բարելավման, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության և վերականգնման նպատակով: Վրաստանի

Սահմանադրության համաձայն՝ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և ռացիոնալ բնօգտագործումը (հոդված 37, մաս 4):

Թուրքմենստանի Սահմանադրությունը պետության համապատասխան պարտականությունը սահմանում է պատասխանատրվություն սահմանելու միջոցով. «պետությունը պատասխանատու է բնական միջավայրի պահպանության համար» (հոդված 10): «Մարդու կյանքի և առողջության համար բարենպաստ» շրջակա միջավայրի պաշտպանությունը Ղազախստանի Սահմանադրությունը դիտում է որպես պետության նպատակ (հոդված 31): Ուզբեկստանի Սահմանադրությունը հռչակում է, որ բնական ռեսուրսները ենթակա են ռացիոնալ օգտագործման և պաշտպանվում են պետության կողմից (հոդված 55): Ուկրաինայի Սահմանադրությունը հռչակում է պետության պարտականությունն էկոլոգիական անվտանգության ապահովման համար և Ուկրաինայի տարածքում էկոլոգիական հավասարակշռության պահպանումը, Չերնոբիլյան աղետի հետևանքների վերականգնումն, ուկրաինական ժողովրդի գենոֆոնդի պահպանությունը (հոդված 16):

ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրություններում ամրագրված՝ պետության գործունեության թվարկված ձևերն ուղղակիորեն կապված են բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի հետ: Ի դեպ, Ղազախստանը, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը, որոնք իրենց սահմանադրություններում ամրագրել են պետության կողմից շրջակա միջավայրի պաշտպանության և բնօգտագործման ոլորտում որոշակի գործողու-

թյունների կատարման պարտականությունը, յուրաքանչյուրի համար սահմանադրորեն բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքը չեն ամրագրել: Այսպիսով, կարելի է ասել, որ այդ պետությունների սահմանադրություններում այդ սուբյեկտիվ իրավունքի իրականացման երաշխիքներն ամրագրված են:

Մենք ավելի տրամաբանական ենք համարում հակառակ գործընթացները, երբ բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի ամրագրումը հիմք է հանդիսանում պետության և նրա մարմինների բնօգտագործման և բնապահպանական գործունեությունը նպատակաուղղելու համար, քանի որ նման իրավունքը ոչ միայն սահմանում է այդ իրավունքը կրողի հնարավոր վարքագծի ձևերն ու ծավալն, այլև ենթադրում է այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց համապատասխան վարքագծի պահանջի հնարավորություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պետության օգնությանը դիմելու հնարավորություն՝ համապատասխան իրավունքի ապահովման համար<sup>11</sup>:

Ինչպես վերը նշվեց, մարդու էկոլոգիական իրավունքներից հանդես է գալիս մի շարք պետությունների սահմանադրություններում ամրագրված շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը: Փաստացի, այս իրավունքը տեղեկատվության իրավունքի մասնավոր դրսևորում է, որը միաժամանակ հիմնված է բարեկեցիկ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մասին սահմանադրական դրույթի վրա:

Շրջակա միջավայրի պաշտպանությունն էականորեն կապված է շրջակա միջավայրի բնագավառում որոշումներ կայացնե-

լու գործընթացում հասարակության մասնակցության հետ, իսկ հասարակության արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ է էկոլոգիական տեղեկատվության մատչելիության ապահովում և նման տեղեկատվությանը տիրապետող պաշտոնատար անձանց լայն աջակցությունը: Այստեղ, ինչպես նշում է Ա. Իսկոյանը, գործում է պարտադիր համագործակցությունը: Եվ չնայած հարաբերության մասնակիցների իրավական կարգավիճակները տարբեր են, իսկ երբեմն էլ նույնիսկ հակընդդեմ, բայց համագործակցության նպատակը միասնական է, այն է՝ շրջակա միջավայրի որակի ապահովում<sup>12</sup>:

Վրաստանի Սահմանադրության հոդված 37-ի 5-րդ մասում այդ իրավունքը ձևակերպված է հետևյալ կերպ. «մարդու կենսամիջավայրի վիճակի մասին լրիվ, օբյեկտիվ և ժամանակին տեղեկատվություն ստանալու իրավունք», Մոլդովայում՝ բնական միջավայրի վիճակի, կյանքի և աշխատանքային պայմանների, սնվելու առարկաների որակի, կենցաղային առարկաների վիճակի վերաբերյալ տեղեկատվության ազատ ստացման և տարածման իրավունք (հոդված 37-ի 2-րդ մաս), Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության իրավունք (հոդված 42), Ուկրաինայի Սահմանադրությունում՝ շրջակա միջավայրի վիճակի, մթերային և կենցաղային առարկաների որակի մասին տեղեկատվության ազատ ստացման և տարածելու իրավունք (հոդված 50-ի 2-րդ մաս), Ադրբեջանի Սահմանադրությունում՝ շրջակա միջավայրի իրավական վիճակի մասին տեղեկատվության հավաքման իրավունք (հոդված 39-ի 2-րդ մաս):

Ինչպես տեսնում ենք, նշված բոլոր սահմանադրություններում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվության իրավունքը ենթադրում է նախ և առաջ այն ստանալը, հավաքելն, իսկ Մոլդովայի և Ուկրաինայի սահմանադրություններում հատուկ նշված է այն տարածելու հնարավորության մասին: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն, ապա այս իրավունքի ամրագրման առումով այն բավականին տարբերվում է մյուս բոլոր սահմանադրություններից, քանի որ այստեղ խոսվում է պաշտոնատար անձանց պատասխանատվության մասին բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար (հոդված 33.2):

Այսպիսով, ԱՊՀ անդամ-պետություններից միայն վեցն են ամրագրում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Նման իրավիճակը լիովին տրամաբանական է, քանի որ բոլոր մյուս սահմանադրություններում, որտեղ նշված իրավունքի մասին դրույթը բացակայում է, ամրագրված է յուրաքանչյուրի տեղեկատվություն ստանալու իրավունքն ընդհանրապես:

Որոշ հեղինակների կարծիքով՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ իրավունքը չունի ինքնուրույն նշանակություն, դրա սահմանադրական ամրագրումն ունի խիստ արտահայտված գաղափարախոսական, ծրագրային հիմք, քարոզչական բնույթ, իհարկե՝ բառի դրական առումով: Մեր կարծիքով՝ հիշյալ իրավունքը կոչված է պետության և շահագրգիռ անձանց ուշադրությունը շրջակա միջավայրի վիճակի վրա կենտրոնացնելու, դրա որակի վերաբերյալ ժամանա-

կին վերլուծություն անցկացնելուն նպաստելու և համապատասխան հաշվետվություններ, կանխատեսումներ, տեղեկանքներ կազմելու և այլնի համար: Այնուամենայնիվ, կարծում ենք, նշված իրավական դրույթները պետության համար անհրաժեշտ հիմք են հանդիսանում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվության իրավունքի ապահովման համար:

Այդ իրավունքների իրականացման կարևոր երաշխիքներից է պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության սահմանումն այնպիսի տեղեկատվություն թաքցնելու համար, որոնք վերաբերում են մարդկանց կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող փաստերին և հանգամանքներին: Այդպես են հիմնավորում պատասխանատվության հիմքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.2, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 41-րդ, Ղազախստանի Սահմանադրության 31-րդ, Ադրբեջանի Սահմանադրության 41-րդ հոդվածները: Ընդ որում, ինչպես վերը նշվեց, և՜ Հայաստանի Հանրապետության, և՜ Ղազախստանի սահմանադրությունները չեն բովանդակում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքի որոշակի այլ երաշխիքներ են սահմանում Բելոռուսի և Ուկրաինայի սահմանադրությունները: Այսպես, Բելոռուսի Սահմանադրության 34-րդ հոդվածն ընդհանուր դրույթ է պարունակում այն մասին, որ Բելոռուսի քաղաքացիներն իրավունք ունեն ստանալ, պահել ու տարածել ամբողջական, հա-

վաստի տեղեկատվություն շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ: Ուկրաինայի Սահմանադրության հոդված 50-ի համաձայն՝ շրջակա միջավայրի վիճակի, սննդային մթերքի որակի և կենցաղային առարկաների որակի վերաբերյալ տեղեկատվությունը ոչ ոքի կողմից չի կարող թաքցվել:

Բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքից և որոշ չափով պետության կողմից հասցված վնասի փոխհատուցման իրավունքից ածանցվում է էկոլոգիական իրավախախտման հետևանքով անձի առողջությանը կամ գույքին հասցված վնասի փոխհատուցման իրավունքը, որն ամրագրված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 42-րդ և Ադրբեջանի Սահմանադրության 39-րդ հոդվածներում:

Կիրգիզիայի Սահմանադրությունն այս ոլորտում սահմանում է, որ վնասը պետք է հասցվի առողջությանը կամ գույքին՝ «բնօգտագործման ոլորտում կատարված գործողությունների հետևանքով» (հոդված 35):

Կյանքի իրավունքն անբաժանելիորեն կապված է բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի հետ: Այն, Յու.Ս. Շենչուչենկոյի կարծիքով՝ «պայմանավորված է բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի հետ, իսկ բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքն էլ իր հերթին միշտ ենթադրվում է մարդու կյանքի իրավունքի հռչակման մեջ»<sup>13</sup>:

Ընդհանրապես «կյանքի իրավունք» հասկացության մեկնաբանման համար հետազոտողների կողմից օգտագործվում են բավականին շատ չափանիշներ: Օրինակ՝ Ֆ.Ս. Ռեշետնիկովը, մեկնաբանելով Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 20-ը, որպես կյանքի իրավունքի երաշ-



խիք նշում է առողջապահության զարգացումը, ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելումն, անվտանգության տեխնիկայի ապահովումը<sup>14</sup>:

Շարունակելով սահմանադրորեն ամրագրված այս իրավունքի իրականացման երաշխիքներն ու պայմանները՝ պետք է նշել, որ չնայած կյանքի իրավունքն ունի ինքնուրույն ամրագրում, նրա դրսևորումներից մեկը կյանքի համար շրջակա միջավայրի բարեկեցիկ որակն ապահովելն է: Հետևաբար, կյանքի իրավունքն իրականացման երաշխիքների ընդհանուր ոլորտներ ունի բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի հետ: Յու.Ա. Ժուրասն, օրինակ, Ուզբեկստանի Սահմանադրության մեջ ամրագրված բարեկեցիկ շրջակա միջավայրի իրավունքի ամրագրումը տեսնում է կյանքի իրավունքի մեջ<sup>15</sup>:

Նշված իրավունքն ամրագրված է ԱՊՀ բոլոր պետությունների սահմանադրություններում:

Էկոլոգիական հարաբերությունների իրավական կարգավորման համար առողջության պաշտպանության իրավունքը կարևոր է շրջակա միջավայրի անբարենպաստ ներգործությունից այն պաշտպանելու առումով: Առողջության պաշտպանության իրավունքի նման ասպեկտն ուղղակի նշված է Բելոռուսի և Տաջիկստանի սահմանադրություններում, որոնց համաձայն՝ այդ իրավունքն ապահովված է ... շրջակա միջավայրի առողջացման միջոցով (այլ չափանիշների հետ մեկտեղ, հոդված 45, հոդված 38): Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ առողջության պաշտպանության իրավունքի իրականացման համար նախատեսված է էկոլոգիական և սանիտարահամաճարակային բարե-

լավմանը նպաստող գործունեության ընդլայնում (հոդված 41, մաս 2):

Վրաստանի և Ուզբեկստանի սահմանադրություններում առողջության պաշտպանության իրավունքն ամրագրված չէ, սահմանված են միայն այդ իրավունքի որոշակի երաշխիքներ (հոդված 37, հոդված 40):

Նշված իրավունքների շարքում կարելի է առանձնացնել օրենքով չարգելված ցանկացած եղանակով տեղեկատվություն ստանալու, փոխանցելու, տարածելու իրավունքը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 27-ում, Բելոռուսի Սահմանադրության հոդված 34-ում, Ադրբեջանի Սահմանադրության հոդված 50-ում, Վրաստանի Սահմանադրության 24-րդ, 41-րդ հոդվածներում, Ղազախստանի Սահմանադրության հոդված 20-ի 2-րդ մասում, Կիրգիզիայի Սահմանադրության հոդված 16-ի 2-րդ մասում, Մոլդովայի Սահմանադրության հոդված 34-ում, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 29-ի 4-րդ և 5-րդ մասերում, Տաջիկստանի Սահմանադրության հոդված 30-ում, Թուրքմենստանի Սահմանադրության հոդված 26-ում, Ուզբեկստանի Սահմանադրության հոդված 29-ում և Ուկրաինայի Սահմանադրության հոդված 34-ի 2-րդ մասում:

Այդ իրավունքը միաժամանակ ապահովում է շրջակա միջավայրի որակի վերաբերյալ տեղեկատվության ստացումը՝ նրանում տեղի ունեցող փոփոխությունների, բնական ռեսուրսների օգտագործման, էկոլոգիական անվտանգության ապահովման մասին, նաև՝ տարածումը:

Տվյալ իրավունքին համապատասխանող պետության պարտականությունն է ապա-

հովել քաղաքացիների իրավունքներին և պարտականություններին վերաբերող տեղեկատրվության մատչելիությունը (Բելոռուսի Սահմանադրության հոդված 34, Ղազախստանի Սահմանադրության հոդված 18, Մոլդովայի Սահմանադրության հոդված 34, Տաջիկստանի Սահմանադրության հոդված 25, Ուզբեկստանի Սահմանադրության հոդված 30, Ուկրաինայի Սահմանադրության հոդված 32):

Ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու քաղաքացիների իրավունքն էկոլոգիական նշանակություն է ձեռք բերում հատկապես էկոլոգիական ճգնաժամի պայմաններում, երբ ԱՊՀ անդամ-պետությունների տարածքները կամ առանձին շրջաններ շրջակա միջավայրի որակի առումով կարող են գնահատվել որպես էկոլոգիական բարձր ռիսկի գոտիներ: Վերոհիշյալ իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 22-ում, Բելոռուսի Սահմանադրության հոդված 30-ում, Վրաստանի Սահմանադրության հոդված 32-ում, Ղազախստանի Սահմանադրության հոդված 21-ում, Մոլդովայի Սահմանադրության հոդված 27-ում, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 27-ում, Տաջիկստանի Սահմանադրության հոդված 24-ում, Թուրքմենստանի Սահմանադրության հոդված 24-ում, Ուզբեկստանի Սահմանադրության հոդված 28-ում, Ուկրաինայի Սահմանադրության հոդված 33-ում, Կիրգիզիայի Սահմանադրության հոդված 16-ի 2-րդ մասում, Ադրբեջանի Սահմանադրության հոդված 28-ի 3-րդ և 4-րդ մասերում:

Ինչպես վերը նշվեց, էկոլոգիական իրավունքի առանձին ինստիտուտների զարգացման համար կարևոր են նաև այնպիսի

սահմանադրական իրավունքներ, ինչպիսիք են՝ իրենց շահերի պաշտպանության համար միավորումներ ստեղծելու իրավունքը, որն ամրագրված է ուսումնասիրվող բոլոր երկրների սահմանադրություններում, խաղաղ, առանց զենքի երթեր, ցույցեր, հավաքներ անցկացնելու իրավունքը, որը ևս ամրագրված է ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրություններում և այլ իրավունքներ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ԱՊՀ անդամ-պետությունները, ներգրավված լինելով նույն տարածաշրջանում, այն դարձնում են «միասնական էկոլոգիական տարածք», որտեղ բնությունը սահմաններ չի ճանաչում, և որոշակի ջանքեր են գործադրվում այս ոլորտի օրենսդրության ներդաշնակության ապահովման ուղղությամբ՝ չժխտելով յուրաքանչյուր պետության բնական առանձնահատկությունները: Արդյունքում, 1992 թվականի փետրվարին՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Մոլդովայի, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի միջև ստորագրվեց նաև «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցերով համագործակցության մասին» համաձայնագիրը, որի կողմերը պայմանավորվեցին մշակել և համաձայնեցված քաղաքականություն վարել հողերի, ջրերի, ընդերքի, անտառների, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև բնական այլ ռեսուրսների պահպանության և օգտագործման բնագավառում: Ըստ համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ իրենց առջև դրված նպատակների իրականացման համար նշված պետություններն անհրաժեշտ էին համարում:

ա) իրենց կողմից ընդունվող բնապահպանական և բնառեսուրսային օրենսդրական ակտերը, նորմերն ու ստանդարտները,

բ) համատեղ մշակել և իրականացնել միջպետական ծրագրեր և նախագծեր բնապահպանության ոլորտում, այդ թվում՝ քիմիական և միջուկային զենքի, ռադիոակտիվ թափոնների անվտանգ ոչնչացման և չեզոքացման ծրագրեր,

գ) կիրառել ընդհանուր մոտեցումներ, մեթոդներ ու ընթացակարգեր շրջակա միջավայրի որակի գնահատականի ոլորտում՝ ապահովելով այդ ամենի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը միջպետական մակարդակով,

դ) մշակել և իրականացնել համաձայնեցված գիտատեխնիկական քաղաքականություն Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում,

ե) համաձայնեցված մեթոդներով առաջնորդվել շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ազդեցության գնահատման համար,

զ) ունիֆիկացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության նորմավորման մեթոդները,

է) ստեղծել և ամրապնդել միջպետական Էկոլոգիական տեղեկատվական համակարգ, և տեղեկատվությունը մատչելի դարձնել նաև մյուս կողմերի համար:

Համաձայնագրի վերոհիշյալ դրույթների իրականացման համար կողմերը որոշում ընդունեցին ստեղծել Միջպետական Էկոլոգիական խորհուրդ և փոխհամաձայնեցված միջպետական Էկոլոգիական ծրագրերի իրականացման համար ձևավորել Միջպետական Էկոլոգիական ֆոնդ<sup>16</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ

Միջպետական Էկոլոգիական խորհուրդն առ այսօր ունեցել է 14 նստաշրջաններ, որի ընթացքում քննարկվել են բնապահպանական համագործակցության ավելի քան 200 հարցեր և ընդունվել ԱՊՀ անդամ-պետությունների բնապահպանական մարմինների կիրառմանը ենթակա մի շարք նորմատիվ և մեթոդական ակտեր, մասնավորապես.

ա) Էկոլոգիական փորձաքննության ոլորտում համագործակցության հիմնական սկզբունքների մասին,

բ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի ղեկավարման մասին:

ԱՊՀ շրջանակներում բնապահպանության ոլորտում համագործակցության զարգացման հարցում մեծ դեր ունի նաև Միջխորհրդարանական ասամբլեան, որի կազմում ստեղծված է Շրջակա միջավայրի պահպանության բաժինը: Ասամբլեան իրականացնում է խորհրդատվական գործառույթ: Նրա գործունեության կարևորագույն ուղղություններից է շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտի մոդելային օրենքների մշակումը: Ստեղծման ժամանակահատվածում էլ, համապատասխան սուբյեկտները խորապես համոզված էին, որ այս մարմնի գործունեությունը մեծապես կնպաստի առանձին պետությունների կողմից լուծման համար լուրջ դժվարություններ կայացնող որոշակի խնդիրների իրագործմանը, մասնավորապես, անդամ-պետությունների համար լայն հնարավորություն կստեղծվի ընդունել ներպետական որակյալ օրենքներ, ինչը հիմնականում պայմանավորված է նաև որոշ պետություններում իրավաբան-Էկոլոգների բացակայությամբ, ինչպես նաև մոդելային օրենքների մշակման միջոցով կապահով-

վի շրջակա միջավայրի օրենսդրության ներդաշնակությունն, ինչը նախատեսված է 1992 թվականի փետրվարի 8-ին կնքված «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում:

Այսպիսով, ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրություններն օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով և բովանդակելով էկոլոգիական հարաբերությունների կարգավորմանն ուղղված մի շարք իրավական նորմեր, իրավական բազա են հանդիսանում ազգային էկոլոգիական օրենսդրության համար:

Համագործակցության երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել այդ պետությունների օրենսդրությունների դեմոկրատացման և էկոլոգիզացիայի գործընթացները, որոնք այդ երկրներից յուրա-

քանչյուրում ունեն արտահայտման տարբեր աստիճաններ: Կարծում ենք, կատարված վերլուծությունը հնարավորություն տվեց առանձնացնել առաջադիմական սահմանադրական դրույթները, մատնանշել իրավաբանորեն և տրամաբանորեն ճիշտ ձևակերպված իրավական դրույթները: ԱՊՀ անդամ-պետությունների սահմանադրությունների տեքստերի համադրումը կարող է նպաստել սահմանադրական նորմերի զարգացմանն ու կատարելագործմանը, որոնք հիմք են հանդիսանում շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական անվտանգության ապահովման, բնօգտագործման շուրջ ծագող հարաբերությունների իրավական կարգավորման համար: Այս գործընթացն առավել կատարյալ արդյունք կունենա ԱՊՀ անդամ-պետությունների ազգային օրենսդրությունների փոխհամաձայնեցված մթնոլորտի շրջանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Իսկոյան Ա. ՀՀ օրենսդրությունը շրջակա միջավայրի իրավական պահպանության վերաբերյալ, Բնապահպանության հարցեր, Եր., 1998թ., էջ 21:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, պաշտոնական հայերեն թարգմանություն, փաստաթղթերի ժողովածու. գիրք Ա. Եր., 2001թ., էջ 12:

<sup>3</sup> Տե՛ս Байдельдинов Д.Л., Куратов С.Г., Правовые проблемы реформирования экологического законодательства Республики Казахстан. Алматы, 1998г., էջ 10:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր. 1992թ., N 4:

<sup>5</sup> Տե՛ս Собрание актов президента и правительства РФ. 1994г., N 14, էջ 1049:

<sup>6</sup> Տե՛ս Виноградов С.В., Транин А.А. СНГ: межгосударственные отношения в области охраны окружающей среды, Государство и право. 1994г., N 12, էջ 43:

<sup>7</sup> Տե՛ս Искоян А., Парадоксы и законы, Природа Кавказа, 3 (12) 2005г., էջ 44:

<sup>8</sup> Տե՛ս Nickel J.W., Viola Ed. Integrating Environmentalism and Human Rights, Environmental ethics. 1994, Vol. 16, N 3, էջ 266:

<sup>9</sup> Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 1995թ.-ին ընդունված ՀՀ Սահմանադրությունը, շրջանցելով մարդու էկոլոգիական իրավունքների ինստիտուտը, հասարակություն-բնություն-պետություն փոխհարաբերություններին անդրադարձել էր միայն հոդված 10-ի շրջանակներում, որը նախատեսում էր, որ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը: Մինչդեռ 2005թ.-ին ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխություններում արդեն էական բարեփոխումներ կատարվեցին նշված բնագավառում:

Ոչ ոք էլ չի կարող անտեսել այն հանգամանքը, որ էկոլոգիական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված հիմնախնդիրները վաղուց արդեն դուրս են եկել տարածաշրջանային սահմաններից և ընդգրկել են ողջ մայրցամաքը, և դրանք կարող են լուծվել միայն համատեղ ջանքերով: Ծգնաժամային առաջընթացին գիտակցված և նպատակաուղղված վերջ դնելն աստիճանաբար դառնում է պետու-

թյունների և համայն մարդկության գոյատևման կարևորագույն նախապայմաններից մեկը: Գլոբալիզացիայի գործընթացները ցույց են տալիս, որ արդեն այսօր շատերի մոտ ձևավորված է այնպիսի մտածելակերպ, որ իրենք ոչ միայն տվյալ էթնոսի, այլ ողջ աշխարհի մարդկության մասն են, որոնք կարող են անցնել պետության և ազգայինի սահմանները և կառուցել երրորդ հազարամյակի նոր քաղաքակրթություն:

---

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու. ՀՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր. N 4 (12), 20 դեկտեմբերի 2004թ., էջ 852:

<sup>11</sup> Տե՛ս Шемшученко Ю.С. Человек и его право на безопасную (здоровую) окружающую среду, Государство и право. 1993г., N 10, էջ 124:

<sup>12</sup> Տե՛ս Искоян А.Б. Повышение уровня экологической осведомленности общественности, Իրավագիտության հարցեր, 2000թ., N 3-4, էջ 46-51:

<sup>13</sup> Տե՛ս Шемшученко Ю.С. Правовые проблемы экологии. Киев, 1989г., էջ 12:

<sup>14</sup> Տե՛ս Комментарий к конституции Российской Федерации, отв. Ред. Окуньков Л.А., М., 1996г., էջ 76:

<sup>15</sup> Տե՛ս Жураев Ю.А. Экологическое законодательство Республики Узбекистан: понятие, основные общерегулирующие нормы и проблемы кодификации, Государство и право. 1996г., N 11, էջ 32:

<sup>16</sup> Տե՛ս Экологическая безопасность и защита прав человека. Ташкент, 2001г., էջ 34-35:



**ՌՈՒԴՈԼՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ (ՀԱՅ-ԳԵՈ)  
ԻԲՐԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ  
ԽՆԴԻՐ**

Հանրապետության արդյունաբերության ու տնտեսության զարգացման հարցում կարևոր տեղ ունեն ընդերքի հանքային հարստությունները, որոնցով այնքան հարուստ է Հայաստան աշխարհը: Հանքային նյութերի որոշ տեսակների պաշարներով Հայաստանն ԱՊՀ երկրներում զբաղեցնում է առաջատար դիրքեր:

Երկրաբանական բարենպաստ վիճակը, հեռանկարային տարածքների առկայությունը, խոր հորիզոններից ոչ բավարար ուսումնասիրությունը, ժամանակակից գիտական տեսությունների կիրառումն, ինչպես նաև նոր մեթոդների ու տեխնիկայի օգնությամբ ընդերքի ուսումնասիրությունն ու օգտակար հանածոների տնտեսական գնահատումը թույլ են տալիս այն հետևությունն անել, որ հանրապետության հումքային բազան այսուհետ էլ կընդարձակվի:

Իբրև հիմնական ու որոշիչ գործունեության օբյեկտներ կարող են ծառայել բնական հանքային ռեսուրսները՝ սև, գունավոր և հազվագյուտ մետաղները (երկաթ, քրոմ,

սնդիկ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, սելեն, թելուր, ռենիում, պլատին, բիւմոթ, տիտան, վանատիում և այլն), բնական տնաշինական և երեսապատման քարերը (տուֆեր, ֆելզիտներ, տրավերտիններ, մարմարի կոնգլոմետատներ, գրանիտներ), բնական սուրբենտները (դիատոմիտներ, բենտոնիտներ, ցեոլիտներ, պերլիտներ), բնական կիսաթանկարժեք հումքերը (ազաթ, օբսիդիան, օնիքսային մարմար, հասպիս, լիսովինիտ, քարացած ծառաբեկոր, լեռնաբյուրեղ, իլմենիտ, նոնաքար, փիրուզ, իսլանդական շպատ): Կան գիտական հանքաբանական գտածոներ ավաստի հանքավայրի հնարավոր հայտնաբերման համար, ինչպես նաև լեռնաքիմիական հումքերի՝ քարաղի, գիպսակավի, հանքային ներկանյութերի, բարիտների, ֆոսֆատների, բորի հումքի, քիմիակայուն նյութերի, հրակայուն նյութերի, ֆլյուսների և այլնի հանքավայրեր: Քիչ չեն նաև կերամիկական և ճենապակյա հումքի, կվարց պարունակող ապակյա հումքի խոշոր պաշարները: Հանքային և քաղցրահամ

ջրերի պաշարների ավելի արդյունավետ օգտագործումը թույլ կտա դրանցից ստանալ արժեքավոր հազվագյուտ մետաղների բաղադրանյութեր (լիթիում, ռուբիդիում, ցեզիում, բոր, գերմանիում ) և շատ ուրիշ քանկարժեք նյութեր:

Հայաստանի Հանրապետության ազգային երկրաբանական ծառայության ստեղծումը հնարավորություն կտա կենտրոնացված իրականացնել պետության հանքահումքային բազայի հայեցակարգային ուսումնասիրությունն ու դրա արդյունքների օգտագործումը երկրի տնտեսության ու արդյունաբերության զարգացման ոլորտում:

### Հայ-Գեոյի հիմնական

#### նպատակներն ու խնդիրները

Կարևորագույն նպատակը հետախուզված հանքային ռեսուրսների օգտագործումն է: Այդ նպատակով պետք է ստեղծվի և կիրառվի ավտոմատացված երկրաբանական-տեղեկատվական համակարգ (ԵՏՀ), որն էլ հիմնականում կիրականացնի երկրաբանական միջավայրի վիճակի ու պահպանության գնահատումը (արտաքին՝ էկոգենային, ներքին՝ էնդոգենային) և թույլ կտա աշխուժացնել արտաքին տնտեսական ու երկրաբանատեխնիկական գործունեությունը:

Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար Հայ-Գեոյի ազգային ծառայությունը պետք է զբաղվի հետևյալ հարցերով՝

1. մասնակցի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, կառավարության կողմից մշակվող և ընդունվող օրենքների

ստեղծման գործընթացներին,

2. ստեղծի երկրաբանական-տեղեկատվական տվյալների հուսալի բազա հանքային ռեսուրսների վերաբերյալ, որը կներառի օգտակար հանածոների ու դրանց հանքավայրերի տեխնոլոգիական ու տնտեսական տվյալները:

Հայ-Գեոյի ազգային ծառայությունն իրականացնելու է բազմաբնույթ համալիր գեոսքանավորում ու մոնիթորինգ՝ աերոտիզերական նորագույն մվաճումների, երկրաբանագիտական տեսությունների ու հետազոտությունների հատուկ մեթոդների կիրառմամբ: Կարևոր հարցերից է լինելու հիդրոերկրաբանական ռեժիմի ու ստորգետնյա ջրերի հիդրոտեխնիկական պայմանների մոնիթորինգը՝ ջրային ռեսուրսների ու ինժեներական երկրաբանության գնահատման ուղղվածությամբ:

Գործունեության կարևորագույն մաս են կազմելու հեռանկարային պլանավորման մեթոդներն ու երկրի հումքային բազայի զարգացման կանխագուշակումները՝ երկրաբանական աշխատանքների ռազմավարական ուղղություններով:

Ներդրումային ու ինովացիոն գործունեության լիցենզավորումն, ըստ ստեղծված տվյալների բազաների, թույլ կտա կարևորել երկրի առաջնահերթ խնդիրներն այդ ոլորտի օգտակար հանածոների հանքերի շահագործման ասպարեզում՝ հենվելով տեխնոլոգիական ու տնտեսական ժամանակակից գնահատման մեթոդների վրա:

Փոխշահավետ միջազգային համագործակցությունը կնպաստի օտարերկրյա կապիտալի համար երկրի այս ասպարեզում

ներդրումներն ավելի նպատակային դարձնելու կարևորագույն խնդրի լուծմանը:

Գործունեության ոլորտներից մի քանիսն էլ՝ երկրաբանական տեխնիկայի, երկրաբանական բնապահպանության ու ընդերքի պահպանության ասպարեզում կհասնեն միջազգային չափորոշիչներին:

Ինքնին հասկանալի է, որ նորաստեղծ ու լայնածավալ այս կառույցը պետք է մեծ ծավալների ուսուցողական ծրագրեր իրականացնի՝ չբացառելով նաև համապատասխան մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումն աշխարհի ամենալավագույն ուսումնական կենտրոններում՝ նպատակ ունենալով մի քանի տարվա ընթացքում հիմնադրելու և կատարելագործելու համաշխարհային չափանիշներին համապատասխան սեփական ուսումնական կենտրոն:

Հայ-Գեոն աստիճանաբար կընդարձակի նաև իր սեփական գիտահետազոտական բազան՝ նպատակ ունենալով մշակել հանքանյութերի նախապատրաստման ու հարստացման նոր տեխնոլոգիաներ ժամանակակից փորձագիտական տեղակայանքների ու վերլուծական լաբորատոր մեթոդների կիրառմամբ: Այս աշխատանքների ծավալման ընթացքը մեծապես կախված կլինի հանքերի հետազոտությունների համար շահագործող ընկերությունների ֆինանսական միջոցների ներդրումների տեմպերից:

Տնտեսական ու սոցիալական զարգացման համար այսպես են լուծվում հիմնահարցերն այն երկրներում, որտեղ բավականին արդյունավետ գործում են ազգային երկրաբանական ծառայությունները (Ավստրիա, Գերմանիա, Իռլանդիա, Ֆրան-

սիա, ԱՄՆ և այլն):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ինչպես նաև Հայաստանի Հանրապետության յուրահատուկ քաղաքական ու տրնտեսական պայմանները, կազմակերպչական հիմնահարցերը կարելի է լուծել՝ տեսադաշտում ունենալով հետևյալ երկու պայմանները.

1. Հայ-Գեոն անմիջականորեն ներառել Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակայության ներքո,

2. Հայ-Գեոին շնորհել ազգային օրգանի կարգավիճակ:

Հայ-Գեոն պետք է իրավասու լինի իրականացնելու գործունեության հետևյալ տեսակները.

ա) մշակել, նախագծել, կառուցել, արտադրել և վաճառել տեխնոլոգիական բարձր մակարդակի երկրաբանական համասարքեր, ծրագրային սարքեր ու համակարգեր,

բ) զբաղվել ժողովրդատնտեսական ու երկրաբանական խնդիրների լուծմամբ, այդ թվում՝ լեռնային հորատանցումներ, հորատանցքեր ու գործունեության այլ տեսակներ, որոնք արգելված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հայ-Գեոի տեղեկատվական ծառայությանն իրավունք է վերապահվելու չիրապարակել այնպիսի տեղեկություններ ու տվյալներ, որոնք առևտրական գաղտնիք են ներկայացնում: Առևտրական գաղտնիքի պահպանումը պարտադիր պետք է լինի Հայ-Գեոի բոլոր քաղծառայողների ու պետական ծառայողների համար: Պետական գաղտնիքի ձևն ու բովանդակությունն, ինչպես նաև դրանց պահպանման կարգը որոշվելու են



Հայ-Գեոի կանոնադրությամբ:

Նշված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել կառավարման արդյունավետ համակարգ (տես՝ նկար 1):

Հայ-Գեոի ազգային ծառայությունը կառավարվելու է միանձնյա ղեկավարման սկզբունքով: Գլխավոր տնօրենն ինքնուրույն է ղեկավարելու ծառայության ամբողջ համակարգն, ինչպես նաև հաստատելու կանոնադրությունն ու դրանում իրականացվող փոփոխություններն, այնուհետև, ըստ սահմանված կարգի, ներկայացնելու է Հայաստանի Հանրապետության կառավարությանն՝ այն հաստատելու համար:

Գլխավոր տնօրենը գործելու է Հայ-Գեոի անունից՝ առանց հավատարմագրի՝ ներկայացնելով կառույցի շահերը բոլոր պետություններում, արտասահմանյան կազմակերպություններում, ընկերություններում: Հանդիսանալու է գույքի սեփականատեր, ստորագրելու է պայմանագրեր, հանձնելու է հավատարմագրեր, բանկերում հաշիվներ է բացելու, հաստատելու է ծառայության կառուցվածքն ու աշխատակազմի ցուցակը, որը պարտադիր է լինելու բոլոր աշխատողների համար:

Հայ-Գեոի գլխավոր տնօրենին կից ստեղծվելու է գիտատեխնիկական խորհուրդ խորհրդակցական ձայնի իրավունքով՝ երկու բաժիններով.

ա) փորձագիտական խորհուրդ (վարչություն), որը բաղկացած կլինի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ու մի քանի առաջատար մասնագետներից,

բ) երկրորդ խմբում կընդգրկվեն

Հայ-Գեոի ծառայության առաջատար մասնագետներ, ուրիշ կազմակերպությունների, ձեռնարկությունների մասնագետներ, ինչպես նաև՝ այլ երկրներից հրավիրված մասնագետներ:

Հայ-Գեոի ֆինանսական գործունեությունը կապահովվի հետևյալ աղբյուրներից.

1. հարկային հատկացումներ և տույժեր, որոնք առաջանում են ընդերքի օգտագործման արդյունքում,

2. Հայաստանի Հանրապետության բյուջետային հատկացումներ,

3. հանրահումքային արտահանման մաքսատուրքեր,

4. Հայ-Գեոին կից ստեղծված հասարակական հիմնադրամի և սեփական արտադրաառևտրական գործունեության հետևանքով առաջացած ֆինանսական միջոցներ:

Հայ-Գեոի ծառայությունը հաստատված չափանիշների հիման վրա ձևավորելու է միասնական գիտաարտադրական ու սոցիալական զարգացման ֆոնդ: Մնացորդային ֆինանսական միջոցները կփոխանցվեն ծառայության աշխատավարձի ֆոնդին, իսկ վերականգնման նպատակով տրամադրված ամորտիզացիոն հատկացումների լրիվ գումարները գիտաարտադրական ու սոցիալական զարգացման ֆոնդ և կօգտագործվեն ըստ անհրաժեշտության: Գիտաարտադրական զարգացման ընդհանուր ֆոնդի միջոցները կծախսվեն գործող օբյեկտների վերականգնման, տեխնիկական վերազինման, գիտահետազոտական, նախագծային-շինարարական և այլ նպատակների համար՝ գործող օբյեկտության համաձայն:

Ֆոնդի միջոցներն ու կուտակումները


կօգտագործվեն շրջանառության սեփական միջոցների վերականգնման, աշխատանքների վճարման և այլ նպատակների համար:

Սահմանված կարգի համաձայն՝ ազգային ծառայության Հայ-Գեոն կարող է օգտվել բանկային կրեդիտորներից:

Բյուջետային հատկացումների հաշվարկներում հաշվի են առնվելու այն առավելությունները, որոնք պետության կողմից նա-

խատեսված են արտակարգ իրավիճակների առկայության հետ կապված աշխատանքների համար:

Փաստորեն, ներկայացված է հակիրճ ծրագիր Հայաստանի Հանրապետության համար չափազանց կարևոր ու արդիական նոր ազգային ծառայության՝ Հայ-Գեո հիմնադրելու ու գործունեություն ծավալելու վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾՄԱՐԱՑՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽԻ Գ-ԱՄԹԷ ԱՐԳԱՅԻՆ ԾՄԱՐԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՏՈԴԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄ

## ԳՈՌ՝ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող



## ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԸ՝ ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հայաստանի Հանրապետության արդի պետական քաղաքականության զարգացման պայմաններում, երբ անընդհատ շեշտվում է հնարավորինս արագ տեմպերով տնտեսական զարգացման անհրաժեշտության մասին, շրջակա բնական միջավայրի պահպանության ոլորտում նոր միջոցների և մեխանիզմների ներդրման խնդրին անդրադառնալը, կարծես թե այդքան էլ հրատապ չէ: Հատկապես այնպիսի պայմաններում, երբ շրջակա բնական միջավայրի պահպանությունը, չնայած ձեռնարկվող միջոցառումներին, շարունակում է մնալ բավարար մակարդակի վրա: Ընդ որում, ամբողջ աշխարհում, և հատկապես Եվրամիության անդամ երկրներում, ընթանում է Էկոլոգիկացված արտադրության միջոցների ներդրման գործընթաց: Նման միջոցների կիրառումը որոշ դեպքերում նույնիսկ բացառում է այս կամ այն գործունեության՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է շրջակա միջավայրի պահպանության միջազգային գործընթացներին և այս ուղղությամբ որոշակի քայլեր են իրականացվում: Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ 2007 թվականի փետրվարի 7-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության Ազգա-

յին անվտանգության ռազմավարությունը, որի մի շարք դրույթներ ուղղակիորեն անդրադառնում են շրջակա բնական միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ու պահպանության խնդիրներին:

Որոշ հետազոտողներ արդի դարաշրջանը բնութագրում են հետարդյունաբերական (պոստինդուստրիալ) քաղաքակրթության անցման փուլ, երբ մարդկությունը թևակոխել է տեղեկատվության, գիտելիքի արժևորման ժամանակաշրջան: Ենթադրվում է, որ վերոնշյալ հիմքերի վրա պետք է իրականացվի մարդ-բնություն փոխհարաբերության ներդաշնակեցում<sup>1</sup>: Միայն այս փաստը հաշվի առնելով՝ կարելի է հասկանալ շրջակա բնական միջավայրի պահպանության խնդրի հրատապությունն ու կարևորությունն, ուստի նաև վերջինիս պահպանության բնագավառում իրավունքի օգնությամբ նոր մոտեցումների և մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը:

Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք շրջակա միջավայրի պահպանության այնպիսի մեխանիզմի իրավական կարգավորման խնդրին, ինչպիսին Էկոլոգիական աուդիտն է: Էկոլոգիական իրավունքի ինստիտուտ, որն անհայտ է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Էկոլոգիական աուդիտը մի դեպքում դասվում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության կազմակերպատիրական մեխանիզմների թվին<sup>2</sup>, մեկ այլ դեպքում՝ դուրս է և՛ վարչական, և՛ տնտեսատիրական մեխանիզմների շրջանակից և դիտվում է որպես բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության բնագավառում կիրառվող ինքնուրույն մեխանիզմ<sup>3</sup>: Ընդհանուր առմամբ՝ շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման տնտեսատիրական մեխանիզմների շարքին դասվում են բնօգտագործման պլանավորումը, շրջակա միջավայրի պահպանության գործընթացների ֆինանսավորումը, բնօգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման դիմաց գանձվող վճարներն, էկոլոգիական ապահովագրությունը<sup>4</sup>, լիմիտավորումը, հարկային, վարկային արտոնությունների սահմանումը, տնտեսական տարբեր խթանիչների օգտագործումը<sup>5</sup>: Հետևաբար, ռուս հեղինակ Մ. Բրինչուկի կողմից էկոլոգիական աուդիտի առանձնացնելը տնտեսական և վարչական մեխանիզմներից, առավելագույնս համապատասխանում է տվյալ ինստիտուտի բովանդակությանը:

Աուդիտը ֆինանսական տերմին է, այն ծագել է լատիներեն «audio» բառից, նշանակում է «նա լսում է» (auditor լատիներենից թարգմանաբար նշանակում է լսող)<sup>6</sup>: Աուդիտ բառը թարգմանաբար նշանակում է «հաշվետվության վերստուգում»<sup>7</sup>: Ֆինանսական աուդիտի զարգացումն ուղղակիորեն կապված է շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման հետ:

Մեծ Բրիտանիայի պատմության մեջ

18-19-րդ դարերը բնութագրվում են շուկայական տնտեսության ինտենսիվ զարգացման ժամանակաշրջան, սակայն այդ զարգացումը զուգորդվում էր ֆիզիկական անձանց մասսայական սնանկացումներով: Հայտնի իրավաբան Ռուդոլֆ Իերինգը գրում էր, որ բաժնետիրական ընկերությունները կործանեցին ավելի շատ մարդկանց, քան՝ բոլոր պատերազմները միասին վերցրած: Այս գործընթացները հանգեցրեցին նրան, որ 19-րդ դարի երկրորդ կեսին, աուդիտորի մասնագիտությունը՝ որպես անկախ, կողմնակի մասնագետի, որը կարող էր տալ ընկերության ֆինանսական վիճակի մասին օբյեկտիվ եզրահանգում, և աուդիտորական գործունեությունը դարձան գործարար ոլորտի բաղկացուցիչ մաս<sup>8</sup>: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող համապատասխան գործունեությունը, որին կանդրադառնանք ստորև, որոշակի հատկանիշներով նման է ֆինանսական աուդիտին, ուստի և ստացել է էկոլոգիական աուդիտ անվանումը:

Տարբեր հեղինակներ էկոլոգիական աուդիտը բնորոշում են տարբեր կերպ<sup>9</sup>:

Ընդհանուր առմամբ՝ էկոլոգիական աուդիտն իրավաբանական անձի և քաղաքացի-ձեռնարկատիրոջ գործունեության ստուգումն ու գնահատումն է՝ վերջիններիս կողմից բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և բացասական ազդեցություններից շրջակա բնական միջավայրի պաշտպանության ապահովման նկատառումով: Էկոլոգիական աուդիտն իրականացվում է անցած և գոյություն ունեցող էկոլոգիական խնդիրների վերհանման և այնպիսի նպատակներից ելնելով, որոնք բխում են բնապահպանական օրենսդրության պահանջներից<sup>10</sup>:

Շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում կազմակերպության էկոլոգիական կառավարման համակարգի և քաղաքականության կատարելագործումը ենթադրում է էկոլոգիական աուդիտի պարբերական անցկացում: Էկոլոգիական աուդիտը հատուկ մեթոդիկա է, որի օգնությամբ բիզնեսի (գործարարության) ռազմավարությունում և արտադրության պրոցեսի հիմնական չափորոշիչներում փուլ առ փուլ ներդրվում են ավելի խիստ էկոլոգիական պահանջներ: Էկոլոգիական աուդիտը ընկերության ներսում էկոլոգիական պոտենցիալի առկայության և պոտենցիալ էկոլոգիական ռիսկերի պարբերական ստուգման միջոց է<sup>11</sup>: Տվյալ պարագայում էկոլոգիական աուդիտը կազմում է կազմակերպության էկոլոգիական մենեջմենթի (կառավարման) առանձին մաս, կամ՝ կառավարման համապատասխան ֆունկցիա:

Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների կողմից էկոլոգիական կառավարման հետ կապված հարաբերությունների ուղղակի իրավական կարգավորում նախատեսված չէ, սակայն փաստացի գործում է՝ ելնելով բնապահպանական և բնառեսուրսային օրենսդրության պահանջներից<sup>12</sup>: Հետևաբար հնարավոր է, որ կազմակերպությունների կառավարման ընթացքում էկոլոգիական աուդիտի մաս կազմող գործողությունները ստանան որոշակի դրսևորումներ:

Էկոլոգիական աուդիտն ուսումնասիրող յուրաքանչյուր գիտություն դրա հետազոտումն իրականացնում է իր առարկայի տեսանկյունից: Մի դեպքում էկոլոգիական աուդիտն ուսումնասիրվում է էկոլոգիական իրավունքի կողմից, որը շեշտը դնում է վերջինիս

իրավական կարգավորման առանձնահատկությունների և էկոլոգիական իրավունքում աուդիտի զբաղեցրած տեղի և դերի վրա, մեկ այլ դեպքում՝ այն դիտարկվում է որպես ընկերության էկոլոգիական կառավարման բաղկացուցիչ մաս և այլն: Սակայն բոլոր դեպքերում ընդհանուր է այն, որ էկոլոգիական աուդիտն անցկացվում է պարզելու համար, թե որքանո՞վ է կազմակերպության գործունեությունը և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում վերջինիս որդեգրած քաղաքականության իրականացումը համապատասխանում էկոլոգիական օրենսդրության պահանջներին: Այսպիսով, աուդիտ տերմինն արդեն իսկ կանխորոշում է դրա հիմնական բովանդակությունը:

Երբ ուսումնասիրում ենք էկոլոգիական աուդիտի առաջացման պայմանները, ապա պարզ է դառնում, որ վերջինիս առաջացումն ու զարգացումն ուղղակիորեն կապված է եղել մեկ այլ կարևոր իրավական ինստիտուտի՝ պատասխանատվության կիրառման հետ: Եվրոպական և Հյուսիս-Ամերիկյան պետությունների մի շարք ընկերություններ, 1970-ական թվականների սկզբներին սկսեցին ենթարկվել գույքային պատասխանատվության՝ շրջակա միջավայրին պատճառած վնասների համար, ինչի հետևանքով տվյալ կազմակերպությունները ֆինանսական զգալի կորուստներ կրեցին: Արդյունքում, ընկերությունները սկսեցին գնահատել իրենց գործունեության համապատասխանությունն էկոլոգիական օրենսդրության պահանջներին՝ հետագայում կրկին անգամ պատասխանատվության չենթարկվելու համար: Որոշակի հատկանիշներով, նշված մոտեցումը համապատասխանում էր ֆինանսական

աուդիտին, ուստի և այդպիսի գործունեությունը ստացավ էկոլոգիական աուդիտ անվանումը: Էկոլոգիական աուդիտն ընդարձակ կիրառություն ունի զարգացած արդյունաբերություն ունեցող այնպիսի պետություններում, ինչպիսիք են՝ Կանադան, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդներն, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Շվեյցարիան, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի մի շարք այլ պետություններ<sup>13</sup>: Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության հետ կապված խնդիրներ ևս կան, մասնավորապես, բացակայում է վնասի չափի գնահատման մշակված մեթոդիկա (խոսքը գույքային վնասի մասին է, որովհետև էկոլոգիական վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն ընդհանրապես դուրս են իրավական կարգավորման շրջանակներից), որի արդյունքում միևնույն արարքի և հետևանքների պայմաններում իրավախախտի համար կարող են առաջանալ միմյանցից տարբեր անբարենպաստ հետևանքներ: Ուստի, պետության, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից էկոլոգիական աուդիտի անցկացումը մեծապես կախված է վերը նշված հանգամանքից, որի արդյունքում նաև կառաջանա պահանջ՝ ենթարկելու իրավական կարգավորման այս ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունները:

Շրջակա բնական միջավայրի որակի բարձրացման գործում ներկայումս բավականին մեծ է Եվրամիության (ԵՄ) ներդրումը: Եվրամիությունն էկոլոգիական աուդիտի բնագավառում ևս ունի նշանակալի ձեռքբերումներ: Էկոլոգիական աուդիտի հետ կապ-

ված հարցերի կարգավորումը հիմնականում իրականացվում է «Եվրոպական էկո-մենեջմենթի և աուդիտի համակարգ»-ի, Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՄՄԿ/ISO), «Շրջակա միջավայրի կառավարման համակարգ»-ի միջոցով:

«Եվրոպական Միության էկո-մենեջմենթի և աուդիտի համակարգ»-ը Եվրամիության տարածքում գործող կազմակերպություններին հնարավորություն է տալիս ստանալ սերտեֆիկատներ՝ բնապահպանական կառավարման բնագավառում ունեցած ձեռքբերումների համար: Եվրամիության յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է ձևավորել անկախ ազգային խորհուրդ՝ սահմանված նորմերի կատարումը վերահսկելու համար: ՄՄԿ կողմից մշակված 14010 ստանդարտը վերաբերում է էկոլոգիական աուդիտին, ընդ որում, ներկայումս էկոլոգիական կառավարման և էկոաուդիտի ՄՄԿ սահմանած 14001-14010 ստանդարտները ներառվում են «Եվրոպական էկո-մենեջմենթի և աուդիտի համակարգ»-ի մեջ: Վերջինիս կողմից էկոլոգիական մենեջմենթին և աուդիտին ներկայացվող պահանջները շատ ավելի խիստ են<sup>14</sup>:

Այս ամենից եզրակացնում ենք, որ էկոլոգիական աուդիտը ձևավորված ինստիտուտ է, իսկ դրա իրավական կարգավորումը համահունչ է հասարակական պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունում գործում է «Աուդիտորական գործունեության մասին» օրենքը, որն ընդունվել է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին<sup>15</sup>: Սույն օրենքի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործու-

նեության իրականացման հիմունքներն են և աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունների կանոնակարգումը: Աուդիտորական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է. «Աուդիտն աուդիտի ենթակվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգումն է, որի արդյունքում տրամադրվում է աուդիտորական եզրակացություն» (հոդված 7, մաս 1-ին):

Օրենքի կարգավորման առարկան, կարծես թե, ընդգրկում է աուդիտորական գործունեությունն ընդհանրապես, սակայն վերը նշված հոդվածից և օրենքի ընդհանուր բովանդակությունից պարզ է դառնում, որ օրենքի կարգավորման առարկան՝ ֆինանսական աուդիտի իրականացման հետ կապված հարաբերություններն են:

Հանրապետությունում գործում են մտավորապես 27 իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են ֆինանսական աուդիտի հետ կապված հարաբերությունները<sup>16</sup>: Հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետության կառավարության «Աուդիտի ստանդարտներն հաստատելու մասին» N 509-Ն որոշումը<sup>17</sup>: Այս ամենը մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ էկոլոգիական աուդիտի կապակցությամբ առաջացող հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում դուրս են իրավական կարգավորման շրջանակներից:

Աշխարհի բազմաթիվ երկրներում էկոլոգիական աուդիտը կազմակերպությունների համար այլևս դադարել է այլընտրանք լինելուց: Այն իրենից ներկայացնում է նախագուշակական և կանխարգելիչ միջոցների ամ-

բողջություն, որի կիրառման անհրաժեշտությունն առավել ակնառու է դառնում շրջակա բնական միջավայրի իրավական պահպանությունն ապահովող ընդարձակ նորմատիվ բազայի պայմաններում:

Արդեն ապացուցված է այն հանգամանքը, որ էկոլոգիական աուդիտը կարևոր դեր ունի ցանկացած կազմակերպության կողմից իրականացվող գործողությունների տարբերասպեկտներում շրջակա միջավայրի պահպանության հեռանկարային ծրագրերի և կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականությունում՝ նոր առաջընթացների և նոր որակի տեղեկատվության ներդրման գործում<sup>18</sup>:

Էկոլոգիական աուդիտի իրականացումն առաջին հերթին պահանջում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վերաբերյալ խորը գիտելիքների առկայություն, մասնավորապես, էկոլոգիական օրենսդրության ոլորտում:

Էկոլոգիական աուդիտի իրականացումը ներառում է երեք հիմնական փուլ, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթափուլերից. պլանավորում (կազմակերպության ղեկավար մակարդակում համաձայնության ձեռքբերում, աուդիտի օբյեկտի, իրականացման սահմանների, տեղի, կոնկրետ ոլորտի որոշում<sup>19</sup>), իրականացում (մինչ աուդիտի, բուն աուդիտի և ետ աուդիտի ենթափուլեր<sup>20</sup>), արդյունքների ամփոփում (աուդիտորական զեկույցի կազմում (ներառում է աուդիտի իրականացման արդյունքում ստացված տեղեկություններ և հանձնարարականներ), հետագա բարեփոխումների իրականացման նպատակով գործողությունների ծրագրի մշակում)<sup>21</sup>:

Վերոնշյալ յուրաքանչյուր փուլի և ենթափուլի մեջ ներառված գործողությունների ամբողջական կատարումն անհրաժեշտ պայման է աուդիտի արդյունքների հավաստիության համար: Իհարկե, էկոլոգիական աուդիտի իրականացման ընթացքում այս կամ այն մեթոդի, միջոցի ընտրության հարցը թողնում են աուդիտորի հայեցողությանը<sup>22</sup>:

Աուդիտի հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացնելիս՝ կարծում ենք, պետք է հաշվի առնել աուդիտի իրականացման փուլերը՝ օրենսդրական կարգավորման առարկան ամբողջական դարձնելու նպատակով:

Ինչպես էկոլոգիական, այնպես էլ ֆինանսական աուդիտը, կարող է լինել պարտադիր կամ կամավոր: Պարտադիր էկոլոգիական աուդիտը կազմակերպվում է բնօգտագործման կառավարման և շրջակա միջավայրի պահպանության պետական լիազորմամբ կողմից և իր բնույթով պետական է: Կամավոր էկոլոգիական աուդիտի անցկացման նպատակահարմարությունը թելադրվում է կազմակերպության և քաղաքացի-ձեռնարկատիրոջ շահերով: Այս պարագայում աուդիտի անցկացման նպատակն է ստանալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանն ու շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված աշխատանքների բարենպաստ, օպտիմալ կազմակերպման վերաբերյալ: Ինչևէ, 20-ամյա համաշխարհային փորձը վկայում է, որ էկոլոգիական աուդիտի անցկացումն առավել արդյունավետ է, եթե այն իրականացվում է որպես կամավոր, ոչ պետական գործունեություն<sup>23</sup>: Վերոնշյալ եր-

կու դեպքում էլ էկոլոգիական աուդիտին ներկայացվող հիմնական պահանջը մեկն է. այն պետք է իրականացվի նորմատիվ իրավական ակտերի դրույթներին խիստ համապատասխան:

Այսպիսով, ի՞նչ կարող է տալ էկոլոգիական աուդիտի անցկացումն այն կազմակերպություններին, որոնց գործունեությունն ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա:

Էկոլոգիական աուդիտը կարող է լույս սփռել կազմակերպության գործունեության անարդյունավետության վրա: Մասնավորապես այնպիսի դեպքում, երբ բացակայում է համաչափությունն օգտագործված ռեսուրսների և դրա արդյունքում ստացված իրացվելիք առարկաների և ծառայությունների միջև: Էկոլոգիական աուդիտի իրականացումը կազմակերպությանը կարող է հստակ պատկերացում տալ վերջինիս գործողությունների և ազդեցությունների մասին և, ի վերջո, կարող է հիմք հանդիսանալ այլ բնապահպանական նախաձեռնությունների համար<sup>24</sup>:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ էկոլոգիական աուդիտի ներդրումը հնարավորություն կտա ստանալ հավաստի, անաչառ տեղեկատվություն՝ ցանկացած սուբյեկտի կողմից բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ: Բացի այդ, կազմակերպությունները կարող են նշված մեխանիզմն օգտագործել իրենց գործունեության արդյունավետության բարձրացման, միաժամանակ նաև՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

Այն դեպքում, երբ էկոլոգիական աուդիտի իրականացման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություննե-



որ դուրս են իրավական կարգավորման ոլորտից, հարց է առաջանում. արդյո՞ք ձևավորվել է այդ ոլորտի հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելու հասարակական պահանջ: Կարծում ենք, այս հարցին պետք է տալ դրական պատասխան: Այդ պահանջն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.2 հոդվածում. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում»:

Հետևաբար, շրջակա միջավայրի ձևավորմանն ուղղված ցանկացած ինստիտուտի ներդրում, ներկա ժամանակաշրջանում հանրային պահանջ է: Այս պարագայում կարող է դրսևորվել նորմատիվ կարգավորման առավելություններից մեկը. նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ հնարավոր կլինի զարկ տալ տվյալ ոլորտի հասարակական հարաբերությունների զարգացմանն, ուստի և էկոլոգիական իրավունքի այս ինստիտուտի կայացմանը:

<sup>1</sup> Տե՛ս Ситаров В. А., Пустовойтов В.В., Социальная экология: Учебное пособие. М., 2000г., էջ 57:

<sup>2</sup> Տե՛ս Ерофеев Б.В., Экологическое право: Учебник. 3 изд, доп. М., 2006г., էջ133:

<sup>3</sup> Տե՛ս Бринчук М.М., Экологическое право: Учебник М., 1998 г., էջ 402-408:

<sup>4</sup> Տե՛ս Экологическое право: Учебник 2 изд. перераб. и доп. Под. ред. В.В. Курочкиной, В.В. Гучкова, М., 2004 г., էջ 143:

<sup>5</sup> Տե՛ս Бринчук М. М., նշված աշխատությունը, էջ 407-448:

<sup>6</sup> Տե՛ս Латинско-русский словарь. СПб., Типография Тренке и Фюсно, 1912 г., էջ 62:

<sup>7</sup> Տե՛ս Հ. Ա. Ասմանգուլյան, Մ.Բ. Հովհաննիսյան, Անգլերեն-Հայերեն բառարան, «Հայաստան» հրատարակչություն, 1991թ.:

<sup>8</sup> Տե՛ս Российское предпринимательское право: учеб. отв. ред. И. В. Ершова, Г. Д. Отнюкова. М., 2007г., էջ 1040-1041:

<sup>9</sup> Տե՛ս Ерофеев Б.В., նշված աշխատությունը, էջ 166-167, Серов Г.П., նշված աշխատությունը, էջ 32-34:

<sup>10</sup> Տե՛ս Бринчук М. М., նշված աշխատությունը, էջ 402:

<sup>11</sup> Տե՛ս Н. В. Пахомова, К. К. Рихтер, Экономика природопользования и экологический менеджмент: Учебник для вузов. Изд. С.-Петер. ун-та, 1999 г., էջ 457:

<sup>12</sup> Ռուսաստանի Դաշնությունում և հետխորհրդային մյուս պետություններում ևս էկոլոգիական կառավարման իրավական կարգավորումը բացակայում է, սակայն այդ ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը քիչ է շրջակա միջավայրի պահպանության հանրային անհրաժեշտությունից: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Серов Г.П., Экологический аудит. Учебно-практическое пособие. М., 1999 г., էջ 115:

<sup>13</sup> Տե՛ս Серов Г.П., նշված աշխատությունը, էջ 12-13:

<sup>14</sup> Տե՛ս [http://www.bsdglobal.com/tools/systems\\_emas.asp](http://www.bsdglobal.com/tools/systems_emas.asp), [http://www.bsdglobal.com/issues/ipp\\_eu.asp](http://www.bsdglobal.com/issues/ipp_eu.asp), [http://www.bsdglobal.com/tools/systems\\_iso.asp](http://www.bsdglobal.com/tools/systems_iso.asp):

<sup>15</sup> Տե՛ս ՀՀՊՏ 12.02.03./9(244):

<sup>16</sup> Տե՛ս [www.laws.am](http://www.laws.am):

<sup>17</sup> Տե՛ս ՀՀՊՏ 25.05.05 /31(403):

<sup>18</sup> Տե՛ս [http://www.epd.gov.hk/epd/english/how\\_help/tools\\_ea.html](http://www.epd.gov.hk/epd/english/how_help/tools_ea.html) Preface:

<sup>19</sup> Տե՛ս [http://www.epd.gov.hk/epd/english/how\\_help/tools\\_ea/audit\\_3.html](http://www.epd.gov.hk/epd/english/how_help/tools_ea/audit_3.html):

<sup>20</sup> Տե՛ս [http://www.epd.gov.hk/epd/english/how\\_help/tools\\_ea/audit\\_conduct.html](http://www.epd.gov.hk/epd/english/how_help/tools_ea/audit_conduct.html):

<sup>21</sup> Տե՛ս [http://www.epd.gov.hk/epd/english/how\\_help/tools\\_ea/audit\\_13.html](http://www.epd.gov.hk/epd/english/how_help/tools_ea/audit_13.html):

<sup>22</sup> Աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի հոդված 11-ի համաձայն՝ աուդիտ իրականացնող անձն ինքնուրույն է ընտրում իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ ելնելով աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներից: Կարծում ենք, նշված սկզբունքը կիրառելի է մաս էկոլոգիական աուդիտի պարագայում:

<sup>23</sup> Տե՛ս Бринчук М. М., նշված աշխատությունը, էջ 404-406:

<sup>24</sup> Տե՛ս <http://www.environment.gov.au/settlements/industry/corporate/audits.html>:



## ՌՈՍԱՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ ուսումնամեթոդական բաժնի պետ

## ԿԱՆԱՅՔ ԲՈՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանքն է, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Սրանից հետևում է, որ քրեական պատասխանատվության է ենթակա այն անձը, որի կատարած հանրորեն վտանգավոր արարքն ուղղակիորեն նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի որևէ նորմով: Իսկ նշված դրույթն ապահովելու համար անհրաժեշտ է անձի կողմից կատարած հանրորեն վտանգավոր արարքի ճիշտ որակում իրականացնել: Հանցագործության որակումն անձի կողմից կատարված արարքի (գործողության կամ անգործության) և քրեական օրենսգրքի հատուկ մասում տեղ գտած հանցագործության կոնկրետ տեսակի հանցակազմի բոլոր հատկանիշների միջև հստակ համապատասխանության բացահայտումը, նույնության հավաստումն ու իրավաբանական ամրագրումն է:

Քրեաիրավական հարաբերություններում յուրահատուկ տեղ է զբաղեցնում արարքի որակումը, որը բավականին բարդ գործընթաց է: Առավել բարդություններ են առաջա-

նում հատկապես, երբ կոնկրետ իրավահարաբերությունը քրեական օրենսգրքում իրավական կարգավորում չունի կամ բավարար չափով չի կարգավորված: Հետևաբար, արարքի և քրեական օրենսգրքի հատուկ մասում ամրագրված հանցագործությունների հատկանիշների նույնության հավաստումը դառնում է չափազանց բարդ, նույնիսկ՝ վիճելի:

Սույն հոդվածում քննարկվում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններից մի քանիսը, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 18-րդ գլխում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածին՝ բռնաբարությանը: Այն համարվում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորը: Ըստ վերոնշյալ հոդվածի՝ բռնաբարություն է համարվում տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ՝ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով: Այս հանցագործու-

թյամբ ոսոնահարվում են կնոջ սեռական ազատությունն ապահովող, իսկ անչափահաս տուժողների դեպքում՝ նաև սեռական անձեռնմխելիությունն ապահովող հասարակական հարաբերությունները: Այս հանցագործության տուժողները կարող են լինել միայն կանայք, իսկ կատարողները՝ տղամարդիկ:

Բռնաբարության սուբյեկտը հատուկ է. այսինքն՝ այս հանցագործությունը կարող է կատարել միայն այն անձը, որը, բացի հանցագործության սուբյեկտին բնորոշ հիմնական պարտադիր հատկանիշներից (մեղսունակ, ֆիզիկական անձը, որը մինչև հանցագործություն կատարելը հասել է օրենքով սահմանված որոշակի տարիքի), օժտված է նաև լրացուցիչ հատկանիշներով, որն այս հանցակազմի համար դառնում է պարտադիր: Խոսքն անձի սեռի մասին է, այսինքն՝ բռնաբարություն կարող է կատարել միայն մեղսունակ, ֆիզիկական, մինչև հանցանք կատարելը 14 տարին լրացած արական սեռի անձը: Ավելին՝ կանանց մասնակցությամբ, խմբակային բռնաբարությունների ժամանակ վերջիններս ենթարկվում են քրեական պատասխանատվության հանցակցության համար (օժանդակող, կազմակերպիչ, այլ ոչ թե կատարող): Օրինակ՝ եթե բռնաբարության ժամանակ կինը բռնում է տուժող կնոջ ձեռքերը՝ նրա դիմադրությունը կոտրելու նպատակով, ապա նա հանդես է գալիս որպես օժանդակող, թեև, եթե նույն գործողությունը կատարեր տղամարդն, ապա կենթարկվեր պատասխանատվության՝ որպես համակատարող:

Բռնաբարություն ասելով՝ հասկանում ենք տղամարդու սեռական հարաբերությու-

նը կնոջ հետ և միայն այն եղանակով, որով որ կինը կարող է հղիանալ:

Մեր օրենսդիրը կանանց բռնաբարության սուբյեկտ չի համարում, որը որոշ չափով արդարացված չէ: Ի՞նչ է, կանայք ունակ չե՞ն բռնաբարություն կատարելու կամ արդյոք չե՞ն կատարում (սեռական հարաբերություն տղամարդու հետ, նրա կամքին հակառակ, կամ նրա անօգնական վիճակն օգտագործելով, կամ բռնություն գործադրելով): Այն դեպքերում, երբ բռնաբարությունը կատարում են կանայք, արարքի որակման հարցում դժվարություններ են ծագում, քանի որ կանայք բռնաբարության սուբյեկտ չեն համարվում:

Հարց է ծագում, մնան դեպքերում կանայք ենթակա՞ են քրեական պատասխանատվության: Տրամաբանությունն ու արարքի վտանգավորությունը հուշում են, որ այո, սակայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածի հատկանիշներով, այդքան էլ պարզ չէ:

Քրեագետների մի մասը գտնում է, որ կնոջ կողմից բնական եղանակով կատարվող սեռական հարաբերությունը պետք է որակել 139-րդ հոդվածով՝ որպես սեքսուալ բնույթի բռնի գործողություն: Այս մոտեցումը մեկնաբանությունների տեղիք է տալիս, որովհետև այն, ըստ էության ոչնչով չի տարբերվում 138-րդ հոդվածով նախատեսված բռնաբարությունից, բացի դերերի (կատարողների) փոփոխությունից, արարքն իր բնույթով չի փոխվում: Հետևաբար, ինչով է պայմանավորված այս մոտեցումը, հստակ չէ: Ստացվում է նույն գործողությունը, որը կատարում է տղամարդը, որակվում է բռնաբարություն, իսկ եթե կատարում է կինը՝ ոչ բռնաբարություն: Այսինքն՝ նրա իրավաբանական գնահատականը

փոխվում է:

139-րդ հոդվածը՝ սեռական բնույթի բռնի գործողություններ կատարելը, դասվում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների թվին:

Մույն հոդվածի առաջին մասը սահմանում է. «Համասեռամոլությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

Վերոնշյալի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն, ըստ էության վերաբերվում է, այսպես ասած սեռական շեղումներին՝ արվամոլությանը, լեսբոսությանը և կանանց ու տղամարդկանց միջև տեղի ունեցող սեռական բնույթի այլ այլասերումներին: Այսինքն՝ սրանք սեռական շեղումներ են, որը և բացառում է բնական եղանակով կատարվող սեռական հարաբերությունը: Բացառվում է նաև այն իմաստով, որ «սեռական հարաբերություն» արտահայտությունն արդեն իսկ նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածում՝ որպես որոշակի գործողություն: Հետևաբար, «սեքսուալ բնույթի այլ գործողություններ» արտահայտությունը չի կարող բովանդակել նաև «սեռական հարաբերություն» իմաստը՝ որպես ամբողջի մաս կազմող գործողություն: Հակառակ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի գոյությունն ավելորդ կլիներ, քանի որ բռնաբարությունը և,

լայն իմաստով սեքսուալ բնույթի բռնի գործողություն է: 138-րդ (բռնաբարություն) և 139-րդ (սեքսուալ բնույթի գործողություններ) հոդվածների սանկցիաներով նախատեսված պատժի տեսակներն ու չափերը նույնպես նույնն են, ուստի բռնաբարություն հանցակազմի գոյությունն այս իմաստով ևս դառնում է ավելորդ:

Վերլուծելով նշված երկու հանցագործությունների վտանգավորության բնույթն ու նրանցով պատճառվող վնասի չափը՝ պարզ է դառնում, որ բռնաբարությունն օժտված է ավելի մեծ վտանգավորությամբ, ուստի, տրամաբանական կլիներ բռնաբարության համար սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հետ համեմատ սահմանել ավելի խիստ պատիժ:

«Սեքսուալ բնույթի այլ գործողություններ» ասելով հասկանում ենք՝ անձի (կնոջ կամ տղամարդու) կողմից սեռական կրքերին հագուրդ տալը խաթարված եղանակով, բնականաբար, բացի համասեռամոլությունից: Կնոջ կողմից կատարվող բնական եղանակով սեռական հարաբերությունը, մեր կարծիքով, չի կարող դիտվել «սեքսուալ բնույթի այլ գործողություն», քանի որ «այլ գործողությունը» բացառում է բնական եղանակով կատարված սեռական հարաբերությունը:

Տրամաբանական չէր լինի «մի գործողության» համար սահմանել քրեական պատասխանատվություն, այնուհետև այն նորից ներառել մեկ այլ հանցակազմում: Ընդհակառակը, կանանց նույնպես համարելով բռնաբարության սուբյեկտ, լիարժեք կարժևորվեն քննարկվող երկու հանցակազմերը, և արարքի որակման հարցում բոլոր տարածայնությունները կվերանան: Նման մոտեցում կա

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում, որտեղ (131-րդ հոդված) բռնաբարությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Բռնաբարությունը՝ սեռական հարաբերությունը տուժողի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով»: Այստեղ կանանց և տղամարդկանց միջև խտրականություն չի դրված և կարևորություն է տրված կատարված վտանգավոր արարքին, այլ ոչ թե ով է այն կատարում:

Քննարկենք մեկ օրինակ ևս. բավականին տարօրինակ վիճակ է ստացվում, երբ բռնաբարությունը կատարվում է միջնորդավորված, այսինքն՝ օրենքի ուժով հանցագործության սուբյեկտ չհամարվող անձին որպես գործիք օգտագործելով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգոյշությամբ: Հանցագործության այսպիսի կատարումը քրեաիրավական գրականության մեջ ընդունված է անվանել միջնորդավորված կատարում: Օրինակ, եթե անմեղսունակ կամ 14 տարին չլրացած անձին օգտագործում են, ասենք, կատարելով գողություն, ապա կատարված գողության համար որպես կատարող պատասխանատվության կենթարկվի

անմեղսունակին կամ 14 տարին չլրացած անչափահասին գողություն կատարելու մեջ օգտագործած անձն, այլ ոչ թե, որպես «գործիք» օգտագործված անմեղսունակը կամ անչափահասը: Նույն կերպ է լուծվում քրեական պատասխանատվության հարցը բոլոր միջնորդավորված հանցագործությունների դեպքում, այդ թվում և՛ բռնաբարության:

Եթե բռնաբարության կազմակերպիչը կին է, իսկ անմիջական կատարողն՝ անմեղսունակ անձ (հոգեկան հիվանդ), ապա կատարող պետք է համարել կազմակերպիչին (կնոջը), սակայն կինը բռնաբարության սուբյեկտ չի համարվում, և առաջանում է կազու: Շատ քրեագետներ առաջարկում են այս դեպքում ևս, այն որակել 139-րդ հոդվածի հատկանիշներով: Այս մոտեցումը, կարծում ենք, ճիշտ չէ, որովհետև փաստացի կատարված արարքը բռնաբարություն է, սակայն «ստիպված» այն որակում ենք որպես սեքսուալ բնույթի բռնի գործողության կատարում, քանի որ կինը չի կարող բռնաբարության սուբյեկտ լինել: Եթե միջնորդավորված բռնաբարությունը կատարվեր տղամարդու կողմից, այն միանշանակ կորակվեր որպես բռնաբարություն, սակայն քանի որ կատարում է կինը, մենք փոխում ենք արարքի իրավաբանական գնահատականը, որովհետև փաստացի կատարված արարքը բավարար իրավական կարգավորում չունի: Ստացվում է, որ ակամայից կիրառում ենք քրեական օրենքի անալոգիա, որն արգելվում է: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

Մեր կարծիքով, կանայք նույնպես

պետք է համարվեն բռնաբարության սուբ-  
յեկտ, այլապես խախտվում է նաև  
Հայաստանի Հանրապետության քրեական  
օրենսգրքի 6-րդ հոդվածը, համաձայն որի,  
հանցանք կատարած անձինք հավասար են  
օրենքի առջև և ենթակա են քրեական պա-  
տասխանատվության՝ անկախ սեռից,  
ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից,

քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգա-  
յին կամ սոցիալական ծագումից, ազգային  
փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից,  
գույքային կամ այլ դրությունից: Սա միևնույն  
ժամանակ ենթադրում է նաև նույն արարքի  
որակման միատեսակ մոտեցում, ուստի  
տվյալ դեպքում արդարացված չէ կոնկրետ  
դեպքով խտրականությունը:

## ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսվում է փոփոխություններ ու լրացումներ կատարել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Ազգային ժողովի կանոնակարգում: Նոր ինստիտուտը գործելու է 2009 թվականի հունվարի 1-ից:

Նախատեսվում է օրինաստեղծ գործընթացում ներդնել և կիրառել նորամուծություն՝ ներազդեցության գնահատման ինստիտուտը, որը հնարավորություն է տալու ավելի վերահսկելի ու կանխատեսելի դարձնել իրավաստեղծ գործընթացը: Մեր երկիրը պատասխանատվություն է վերցրել կատարելու այս նորարարությունն, իսկ Հարավային Կովկասում և ԱՊՀ երկրներում դեռևս քննարկվում է նոր ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը, մշակվում են հայեցակարգեր: Այս հարցում անհրաժեշտ է, որ օրենքի նախագծի հեղինակը հիմնավորումներ բերի այն մասին, որ օրինագիծը համապատասխանում է Սահմանադրությանը, համահունչ է այն միջազգային փաստաթղթերին, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Հարկ է նաև պարզաբանել, թե կոնկրետ տվյալ իրավական ակտի ընդունմամբ կառաջանա՞ն արդյոք լրացուցիչ ծախսեր, ինչպիսի՞ն կլինեն դրանք և այլն: Արդարադատության նախարարի բնորոշմամբ, նոր ինստիտուտը ներդնելուց հետո իրավական ակտի մշակումը նախաձեռնող յուրաքանչյուր մարմին պետք է հաշվի առնի, որ բացի իրավական

փորձաքննությունից, իրավական ակտի նախագիծը պետք է ստանա նաև առնվազն ութ եզրակացություն տարբեր չափանիշներով՝ կոռուպցիոն դրսևորումների, սոցիալական, բնապահպանական, փոքր ու միջին ձեռնարկատիրության և այլ տեսակետներից և ցանկացած իրավական ակտի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել, թե ընդունումից հետո ինչպիսի՞ն կարող են լինել հնարավոր բոլոր հետևանքները:

Հարկ է նշել, որ իրավաստեղծ գործունեության մեջ առանցքային դեր ունի կառավարությունն, իսկ պատգամավորների հեղինակած, նախաձեռնած օրինագծերին վերջինս եզրակացություն կտա ոչ միայն իրավական փորձաքննության այլ նաև՝ նշված բոլոր չափանիշներով: Նորարարությունն ունի կարևոր սոցիալական իմաստ, քանի որ պարզ կլինի, թե ինչ ակնկալիքներ կարող է հասարակությունն ունենալ այդ օրենքի ընդունումից: Որոշակի սահմանափակումներ ենթադրող իրավական ակտերի պարագայում, իրավասու մարմինն իր վրա պատասխանատվություն է վերցնում պարզաբանելու, թե ինչպիսի՞ն են լինելու այդ սահմանափակումներն, ի՞նչ ժամկետներում հնարավոր կլինի տեսնել դրանք, վերացնել բացասական հետևանքները և այլն: Արդարադատության նախարարն ամենևին էլ համակարծիք չէ, թե նոր ինստիտուտի ներդրումը կարող է դանդաղեցնել իրավաստեղծ գործընթացը, քանի որ եզրակացություններ տալու համար նա-

խատեւած է 15-օրյա ժամկետ: Այս հարցում կամայական մեկնաբանություններ ու եզրահանգումներ չեն թույլատրվելու, որովհետև ամեն մի եզրահանգում ունենալու է իրավական նշանակություն:

Ի դեպ, շատ են դեպքերը, երբ բավականաչափ ռեսուրսներ ծախսելուց և մեծ աշխատանքներ կատարելուց հետո ընդունված օրենքը չի կիրառվում և մնում է թղթի վրա, իսկ օրինաստեղծ գործընթացում հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ակտիվությունը նկատվում է ոչ թե նախագծի մշակման, այլ արդեն բուն ընդունման

փուլում, երբ արմատական փոփոխություններ կատարելու հավանականությունը շատ փոքր է. նոր ինստիտուտի ներդրումը լուծումներ կառաջարկի նաև այս հարցում:

Պետք է նշել, որ բացի պետական իրավասու գերատեսչությունների եզրակացություններից, անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել նաև անկախ փորձագետների, իրավաբանական գրասենյակների եզրակացություններն, իսկ չհիմնավորված կամ սխալ եզրակացություններ տվող պետական մարմինները կենթարկվեն պատասխանատվության:



## ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ



Շախմատի տանն ավարտվեց ևս մեկ մրցաշար, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից 35 դատապարտյալ: Մրցաշարին ներկա էին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը, քրեակատարողական վարչության պետ Աշոտ Մարտիրոսյանը, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Արդարադատության նախարարը նշեց, որ միջոցառման նախաձեռնության մեջ զգալի աշխատանք են ունեցել նաև դատապարտյալները, որոնց ցանկությունը քննարկվեց, գնահատվեց, կատարվեց կազմակերպչական մի շարք աշխատանքներ, և վերջապես կայացավ այս մրցաշարը:

Նախքան այս քրեակատարողական հիմնարկներում անցկացվել էր ևս մեկ մրցաշարի կիսաեզրափակիչ փուլ, և լավագույն մասնակիցները հնարավորություն էին ստացել մասնակցել Շախմատի տանն անցկացվող եզրափակիչ փուլին: Դատապարտյալ-

ների մրցաշարը վերջիններիս համար պատեհ առիթ էր ցուցաբերելու լավ վարք, որը և խրախուսվելու էր համակարգի ղեկավարության կողմից: Մրցաշարին ներկա էին քրեակատարողական հիմնարկների ղեկավարներն. այստեղ էին նաև դատապարտյալների հարազատները, որոնց համար սա լավ առիթ էր տեսակցելու նրանց: Վերջիններս հույս ունեին նաև իրենց մերձավորին տեսնել առաջին հորիզոնականում, որի դեպքում դատապարտյալին կարճատև մեկնում կամ երկարատև տեսակցություն կտրամադրվեր: Շվեյցարական մրցակարգով չեմպիոնի կոչումը վիճարկում էին 34 շախմատիստներ: Հատկապես հաջող էին հանդես գալիս «Սևան» և «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկների դատապարտյալները:



Լավագույն եռյակում ընդգրկվեցին՝ Արտակ Խառատյանը, Հովհաննես Դոխոյանը և Աշոտ Վահրադյանը, որոնք 7 հնարավորից վաստակել էին 6-ական միավոր. լրացուցիչ տվյալներով հաղթեց Արտակ Խառատյանը: Զուգահեռաբար անցկացվում էր նաև կանանց մրցաշարը, որին մասնակցում էին ընդամենը 4 հոգի: Նրանք պայքարեցին 2 փուլով, և հաղթեց Նազիկ Կալեսնիկը:

### ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում տեղի ունեցավ «Արդարադատություն» պարբերականի շնորհանդեսը: Հանդիսավոր արարողությանը ներկա էին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Նիկոլայ Առուստամյանը, Հայաստանի Հանրապետության արդարադատության քրեակատարողական վարչության պետի տեղակալ Վաղինակ Քոչարյանը և այլք:

Իրավաբանական ինստիտուտի տնօրեն Աշոտ Հայրապետյանն իր բացման խոսքում նշեց, որ այս պարբերականն արդարադատության նախարարության համակարգում առաջին գիտական հանդեսն է, որում, բացի իրավաբան գիտնականների հոդվածներից, ընդգրկված են նաև գիտության այլ ոլորտներին առնչվող հեղինակների հոդվածներ, որոնք, այս կամ այն կերպ կապ ունեն իրավաբանության հետ: Բացի գիտական հոդվածներից, հանդեսում տեղ են գտել նաև հետաքրքիր ու յուրօրինակ տեղեկություններ՝ կապված արդարադատության նախարարության աշխատանքների հետ: Այնուհետև ելույթ ունեցավ արդարադատության նախա-

րար Գևորգ Դանիելյանը, որն իր խոսքում ընդգծեց հանդեսի կարևորությունը, և հայտնեց իր պատրաստակամությունն՝ աջակցելու հետագա համարների լույս ընծայմանը, հուսալով, որ այն իր արժանի տեղը կգտնի ընթերցասեր հասարակության շրջանում: Ելույթ ունեցավ նաև «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Նա շնորհավորեց ինստիտուտի աշխատակազմին, խմբագրական խորհրդին և ընդգծեց հանդեսի որակական բարձր հատկանիշները:

Իրավաբանական ինստիտուտի տնօրեն Աշոտ Հայրապետյանն ընթերցեց գիտական խորհրդի որոշումը, համաձայն որի, իրավագիտության ասպարեզում ներդրած նշանակալի ավանդի համար, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանին շնորհվեց «Հա-



յաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պատվավոր դոկտորի կոչում: